

34

5
a-39


36

N.H.

1799.
1722.

2010

N 261 x. q. 5 24 N 261 m.



Ն ԱՐ

ԻՐԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ԵՐԿԱՍԻՐԵԱՑ



Հ. ՊԱԿԱՆՈՍ Վ. ԳԱՎՐԱՆ

ԵՐԿՐՈՐԴ ՀՐՁԱՆ



ՎԵՆԵՏԻԿ
Ի ՍՈՒՐԵ ԴԱԶԱՐ

1896



ՆՈՐ ԻՐԱԳԻՏՈՒԹԻՒՆ

ԵՐԿՐՈՐԴ ՇՐՋԱՆ

15916-02

5

9-39

այս

ՆՈՐ

Ի ՐԱԳԻ ՏՈՒԹԻՒՆ

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՏՂՈՑ ՀԱՄԱՐ

ԵՐԿԱԾԽԵԱՅ

Հ. ՊԱՀԴՈՍ Վ. ԳԱՖԻԱՆ

Ի ՄԵԽՄԱՐԵԱՆ ՈՒԽՏԵՆ

ԵՐԿՐՈՐԴ ՇՐՋԱՆ

N 261x

ԶԱՐԴԱՐԵԱՆ 400 ՊԱՏԿԵՐՈՒԹ

N 231m



- 002

2096



ՎԵՆԵՏԻԿ — Ս. ՊՈԶԱՐ

Ն Ո Ր

Ի Ր Ա Գ Ի Տ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Ե Ր Կ Ք Ա Ր Դ - Շ Բ Զ Ա Ն

— Հ —

1. — Դպրոցականի մը կարեւորներն .


Դպրոցական տղու մը դպրոցի մէջ կարևորներն են թանաք, գրիչ, բուղյօ, ծրագրիչ (crayon), քանոն (règle), կաշիձ, խէժ (gomme), ներկերու տուփի, վրձին :

Գրիչը կամ գրչածայրը՝ որ գրելու կը ծառայէ՝ կը շինեն պողովատ ըստած տեսակ մը երկաթէ, զոր կլորածն կը ծռեն, կը որեն, և կը ճեղքեն մեքենայով մը : Գրիչը՝ վոխանակ պողովատով շինելու՝ եթէ ուղէին երկաթով շինել, փոքրիկ ճնշմամբ մը պիտի ծռէր և յետոյ պիտի չկարենար իւր առաջին ձեւը առնուլ : Հիները չունէին պողովատէ գրիչներ, այլ սագի փետուրները կը կտրէին գրչի ձեռվ և անոնցմավ կը գրէին :

Կաղնիի (chêne) ճիւղերուն վրայ կը բուռնին կանաչ փոքրիկ այտուցներ, որք միջա-

տի մը խածուածքէն կը ձեանան և գղրոր
(noix de galle) կ'ըսուին. իրենց մէջ աղաղ
(tannin) բովանդակելնուն համար՝ բանաքր
անոնցնվ կը շինեն, և բաւական է միայն ե-
ռացնել զանոնք ֆֆմբատ երկարիով (sulfate
de fer) :

Գրչակալը (porte-plume) երկու մասէ կը
բաղկանայ, կոր և ստոյգ գրչակալ։ Կորի՝
փոքրիկ ձող մ'է՝ ընդհանրապէս փայտէ, որ



Գլուխու:

կրնայ ըլլալ նաև ոսկրէ, փղոսկրէ, և այլն.
զայն պատրաստելու համար՝ կը կտրեն փայ-
տերը միաձև՝ մեքենական սղոցներով և կը
կլրցնեն զանոնք տարբեր մեքենաներով. սա-
կայն ստոյգ գրչակալը կ'ըլլայ երկաթէ, պո-
ղովատէ կամ արոյրէ, և կը շինեն մի և նոյն
կերպով։ Ինչ եղանակաւ որ բացատրեցինք
վերը գրչածայրերու շինուիլը։

Երկու տեսակ ծրագրիչ կայ. մին սեաւ՝
նկարչութեան համար, միւսը սովորական՝ որ
գրելու կը ծառայէ։ Սեաւ ծրագրիչները շի-
նելու կը գործածեն մոր և նուրբ կաշ (argile),
միացնելով զանոնք խէժով կամ սո-
սինձով։ Իսկ սովորական ծրագրիչները պա-
տրաստելու կը գործածեն ուրուաքար (gra-
phite), զոր կտրելով և սղոցելով կը վերածեն
գաւաղանիկներու, և կ'ագուցանեն իրենց
փայտեայ պատեաններուն մէջ։ Աղոցմամբ և
կտրելով աւելցած ուրուաքարի կտորուանքն
կը փոշիացնեն, զանդուած մի կը շինեն կա-
ռով և խէժով, և ծրագրչի տեղ կը գործա-
ծեն։

Ուրուաքարը կը գտնուի խոր ապառաժ-
ներու մէջ՝ կազմելով փոքրիկ կոյտեր և երակ-
ներ. հանքերու նման կը հանեն զայն ջրհոր-
ներ բանալով, և ճամբաները անոնց հետ կը
հողորդակցեն։

Իսկ գունաւոր ծրագրիչները, որք երփնա-
երանգ ծրագրիչ (crayon en pastel) կ'ըսուին,
կը շինեն զանդելով փոշիացեալ գոյները խէ-
ժի հետ, որ ուրուաքարի զանդուածին նման
կ'ըլլայ։

Սակայն ասոնք շատ անգամ չունին փայ-
տէ պատեան, այլ գոյնզգոյն գլանաձև գաւա-
զանիկներ են։ Ասոնցմանով կը ծրագրեն թղթի
վրայ գունաւոր նկարներ. բայց որովհետեւ
մեծ անպատճհութիւն մ'ունին՝ որով փոքրիկ
շփմամբ կ'աւրուին դիւրաւ, հետևաբար պէտք
է շրջանակի մէջ անցունել զանոնք և ապակւց
տակ պահել։

Կաշիձը որ տախտակի վրայ գրելու կը

ծառայէ, կը պատրաստեն բնածխատ կրաֆ-
էկ (carbonate de chaux), վերածելով զայն
նուրբ փոշոյ. Եթէ փշրենք կաւիճի կտոր մը
և մանրագէտ գործով դիտենք, կը տեսնենք
որ ձեւացած է խեցիներէ (conquille) և փո-
քրիկ կենդանեաց թեկորներէ՝ որք ժամանա-
կաւ ջրերու մէջ կ'ապրէին :

Դպրոցներու մէջ թղթերու վրայի թիծե՞ն
աւրելու համար գործածուող խէժը կամ ձրգ-
տական խէժ (caoutchouc) կոչուածն, կ'ելլէ
չնդկաստանի կամ Հարաւային Ամերիկայի
քանի մը ծառերու հիւթէն. ժողվելու համար
կը ճեղքեն այս ծառոց բուները և վաղած
կարնեղէն նիշքը կը ծորեցնեն անօթի մը մէջ.
և որպէս զի ձգտական խէժը պատրաստեն,
կը ծածկեն այս հիւթով փայտէ թիակ մը,
և կրակի վրայ մեզմով կը դարձունեն. ճեղա-
նիւթը կը գոլորշիանայ և կը թողու խէժային
խաւ մը. կը շարունակեն այս գործողութիւ-
նը՝ մինչև որ այս խաւը թանձրանայ, և կ'ու-
նենան ձգտական խէժը :

Քանինեներէ՝ ըլլան քառակուսի կամ տա-
փակ, կը շինուին ջոր փայտերով. կը սղո-
ցեն կամ կը կտրեն զանոնք երկայնաձև և
կ'ողորկեն մեքենաներով. Եթէ այս ամեն աշ-
խատութիւնները ձեռքով ընելու ըլլային՝
դժուարին էր այնքան ողորկ և կանոնաւոր
ձշութեամբ շինել զանոնք, հետեաբար սուզ
ալ պիտի ծախուէին :

Ներկերու տուշիերուն մէջ գտնուած գոյ-
ները՝ կը պատրաստեն հանքային նիշքերով
կամ բուսական նիշքերով. գրեթէ ամենքն
ալ թունաւոր են, այդ պատճառաւ ներկի

վրձինները պէտք չէ որ տղաք բերաննին տա-
նին և լեզուով մաքրեն, այլ ջրով լուալու են:

Այս գունաւոր ներկերն պատրաստելու հա-
մար, որ երկայնաձև կամ քառակուսի են,
կը փոշիացնեն հանքային նիւթերը և առատ
ջրով կը լուծեն. խոշոր մանրուած կտորները
կ'իջնեն ջրոյն յատակը, իսկ նուրբ փոշինները
ջրոյն մէջ առ կախ կը մնան: կը լեցնեն գու-
նաւորեալ ջուրը խոր անօթներու մէջ և կը
թողուն որ հանգչի բարակ փոշին. ջուրը կը
գունատի, կը լեցնեն զայն ուրիշ անօթի մը
մէջ, և ժամանակ անցնելէ ետքը՝ դարձեալ
կը հանգչի ջրոյն յատակը աւելի նուրբ փոշի
մը: Վերջինս կը զանգեն խիժային ջրով և
կը թափին զանգուածը կազապարներու մէջ:

Իսկ բուսական հիւթերէ ներկեր պատրաս-
տելու համար, կը գոլորշիացնեն զանոնք, և
կամ հաստատուն մարմին մը կը ձգեն մէջը
որպէս զի ծծէ այդ գոյներն. յետոյ նախըն-
թաց եղանակաւ նոյն մարմին կը ստանան
դոյնը:

Վրձինները քանի մը կենդանեաց մազե-
րովը կը շինեն. ասոնցմով կը կազմեն խըր-
ձիկներ, կը կապեն խէժուած թեղով մը և
կ'ագուցանեն ագռաւի, սագի կամ կարապի
փետուրներու եղեգին մէջ:

Հարցմունք. — Դպրոցական աղու մը կա-
րերիներն որոնք են. — Ի՞նչ է գրեշը և ի՞ն-
չով կը շինեն. — Զիները ի՞նչ գրեի կը գոր-
ծածէին. — Թանաքը ի՞նչով կը պատրաս-
տեն. — Ի՞նչ է գրչակալն. — Ի՞նչ է ծրա-




Կողմանակը:

գրիչն և քանի տեսակ կ'ըլլայ. — Ուրուաքարը ուսկից կը հանեն. — Երփներանդ ծրագրիչներն ինչով կը շինեն. — կաւիճն ինչով շինուած է. — Խէժն ուսկից կ'ելլէ. — Քանոնները ի՞նչ կերպով կը պատրաստեն. — Ներկերը ի՞նչ նիւթերէ կը հանեն և ի՞նչպէս կը պատրաստեն. — Վրձիններն ինչով կը շինեն :

2. — Մարդուս ընակութեան սկզբնաւորութիւնը.

Մարդիկ հնուց 'ի վեր միշտ անհրաժեշտ պէտք մը զգացեր են բնակութեան և ծածքի մը տակ պատսպարուելու, կամ առանձին և կամ իրենց ընկերակցաց հետ։ Ոչ միայն մարդիկ, այլ և կենդանիք անդամ՝ կը զգան այս




Արջամանկն:

պէտքը. կը տեսնենք որ բոչուններն իրենց համար բոյներ կը շինեն, մեղունները՝ փերակ, արջամուկը (marmotte) ձմեռ եղանակի համար ստորերկրեայ խոռոչներ, սկիշոր փոքրիկ աշտարակ մը ուր կը պատսպարէ ինքզինք անձրեի միջոց, և այլն։ Այս բոլոր կենդանիներն իրենց բնազդմամբ միայն սկսած են շինել բնակութիւննին, ամենքն ալ մի և

նոյն ձեռվ, մի և նոյն ճարտարապետութեամբ, և առանց յառաջադիմութեան մը:

Սակայն մարդս նախ սկսած է շինել հիւրդ մը, ինչպէս գեռ մինչև այսօր կը տեսնենք որ վայրենիներն անոնց մէջ կը բնակին. քիչ մը յառաջադիմելէ վերջ սկսած են հանգրուաններ շինել, գեռ աւելի զարդանալէ յետոյ տներ և ապա պալատներ:


Ուրեմն, ըսել է թէ քաղաքականութեան դարդանալովն՝ մարդկանց բնակութիւններն ալ հետզհետէ բարեկարգուած են:



Սկիւռ:

Մարդիկ առաջ հաստատուն բնակութիւն մը չունէին՝ քանի որ հիւղերու կամ խրճիթներու մէջ կը բնակէին, այլ թափառական կը շրջէին, ուզած տեղերնին կ'երթային, կը հաստատէին հոն բնակութիւն մը, կ'ապրէին որորդութեամբ կամ մշակութեամբ: Երբ բազմացաւ մարդկութիւնն և զարդացաւ քաղաքականութեան մէջ, հաստատուն և կարգաւորեալ բնակութեան մը պէտքը զգաց: որով

մարդիկ սկսան շինել իրենց յաստուկ տներ, և տիրացան երկիրներու:



Հարցմունք. — Կենդանիները տնին իրենց բնակարանները և ինչ սկզբամբ կը շինեն. —

Մարդիկ ի՞նչպէս սկսած են իրենց բնակութիւնները շինել. — Մարդիկ առաջ հաստատուն բնակութիւն մ'ունէին. — Ե՞րբ պէտք դդացին հաստատուն բնակութեան մը:

3. — Հովուութիւն.

Հովիշ կ'ըսուին այն մարդիկ, որոնք իրենց ձեռաց տակ ունին խորմը մ'ոչխարևերոց և զանոնք կը հոգան, կը խնամեն և կը կառավարեն: Հովիւը պէտք է գիտնայ միանդամյն կենդանեաց բժշկութիւնը, հասկնայ անոնց հիւանդութիւնները և զանոնք բժշկելու միջոցները: Ինքն պատասխանատու է ոչխարաց խումբին, որ հօտ կ'ըսուի և իրեն ինամոց յանձնուած է:

Հին ժամանակ հովիւնները մեծ յարդ ունէին, և պատուաւոր գործ կամ արուեստ մը համարուած էր հովուութիւնը. մարդկանց առաջին հարստութիւնը իրենց հօտն էր: Հինները կը կոչէին թագաւորները հովիշ ժողովրդեան, և անոնց թագաւորական առաջին գաւազանը՝ հովուի ցուպ մ'էր:

Հովիւը կը խուզէ ոչխարներուն մազերը և բուրդ կը հանէ. անոնց կաթը կը կթէ և անով կը շինէ պանիր և կարագ. զանոնք մորթելէ վերջ եղջիւրները կը ծախէ, մորթով մուշտակ կը շինէ կամ պատրաստել կու տայ աղաղով (tannin), և կօշկակարներու կը վաճառէ որ կօշիկ շինեն. մներնին մսավաճառաց կը ծախէ:


Հովիւը իւր հետ ունի պահապան շուն մը՝

իբր հաւատարիմ ընկեր և բարեկամ, և անոր հետ միասին կը հսկէ իւր հօտին վրայ:

Հարցմուռնք. — Ի՞նչ է հովիւը և ի՞նչ բան պէտք է որ գիտնայ. — Հին ժամանակ հովուութիւնը յարգի բան մ'էր. — Հովիւը ոչխարներէն ի՞նչ կը հանէ. — Հովիւը իրեն ընկեր ունի:

4. — Սեսեկի մը կան կարասիներն.

Մտնենք ձմեռ եղանակի մէջ պարկեշա և կահաւորեալ սեսեկակ մը. պիտի տեսնենք հոն հայր մը և մայր մը իրենց զաշակներով:



Պահապան շուն:

Կայ սեղան մը՝ որուն չորս կողմը շարուած են տղաքները, և իրենց գպլրոցական պարտ-

քերը կամ գտները կը պատրաստեն յաջորդօրուան համար. հայրերնին կը կարդայ, մայրերնին կը կարէ:

Սենեկին մէկ ծայրը կայ անկողին մը, ասդիս անդին աբոռներ, բազմոցներ, պատին կոթնած գրառուն մը, կրակարան, հայելի, ձօձանակառոր ժամացոյց և աշտանակներ: Կրակարանին մէջ կը վասի փայտ և հանածոչի (houille), և փառած է գետնին վրայ գորգ մը: Սեղանին վրայ կը գտնուի բամբար մը, գրքեր, տեսրակներ, գրիչներ, և սակառ մը մէջը լեցուն կարելիք:

Անկողինն, աբոռներն, սեղանն և գրառունը փայտերով շինուած են. փայտը անտառներէն կը կտրեն, և շատ անդամ շոգենաւներով հեռաւոր երկիրներէ կը բերեն: Յատուկ աշխատաւորներ կտրած են այդ փայտերը, ձեած և ողորկած են՝ որպէս զի անոնցմով կահ կրասիներ շինեն, և յետոյ ժնարակած են: Անկողնոյ և վերմակներուն բռորդը կը հանեն ոչխարներէ: ձարը՝ ձիերու առշէն՝ որոցմով կորնելու բարձեր և նըստարաններ կը շինեն. մանրակիւտորը՝ կարպի և սադի փետուրներէն կ'ելլէ՝ որոցմով կը լեցունեն զիխոյ բարձերը. անկողնոյ և բեսները՝ կանեփով կամ բամբակով կը պատրաստեն:

Կրակարանը շինուած է մարմարեայ քարերով: Հայելին՝ սովորական ապակի մ'է՝ ծածկուած ետեի կողմը խառնրզով մը սեղկի և անագի. իւր շրջանակը փայտէ է, զոր գործաւորը շինելէ վերջ ոսկեզօծեր է: Ձօձանակառոր ժամացոյցը մետաղով շինուած

է, և ապակեայ գուռ ունեցող փայտէ տիփի մը մէջ գրուած. աշտանակներու վրայ կան մումեր որք շինուած են կովու կամ ոչխարի ձարափով: Վառուած կանքեղը՝ որ կը լուսաւորէ սենեկը՝ իւր մէջն ունի քարիշդ (pétrole) որ ջրհորներէ կը բղիսէ: Կրակարանին մէջ այրող փայտերը կը կարեն անտառներէ, իսկ հանածոչիւնը գետնի տակ գտնուող հանքերէ կը հանեն. կրակարանին քով կան մետաղեայ թիւակ մը և ունելիք մը:


Գորգը՝ որ գետնի վրայ փառած է, կը շինեն ոչխարներու բռորդով, զոր կը մանեն, կը հիւսեն և կը ներկեն այլ և այլ գոյներով:

Հարցմունք.

50 Մարմարներ կը գտնուին. — Մենեկի մը մէջ ի՞նչ կահ վերմակները, բարձերը ի՞նչ նիւթերէ շինուած են. — Կրակարանը, հայելին, ժամացոյցն ի՞նչ են. — Մշտանակներու վրայի մերն և քարիւզն ի՞նչ են. — Կրակարանին մէջ ի՞նչ կ'այրեն. — Գորգը ի՞նչով կը շինեն:

5. — Համազգեստներու ձեւերն.

Ինչպէս որ անհրաժեշտ համարուած է կերակուրը և բնակարանը մարդկանց համար, նոյնպէս է նաև ապանելիքն. այն որ հիմայ մեզ համար ամենապարզ և ամենաբնական ձև է զգեստի՝ հիներուն բոլորովին անծանօթէր: Մշակներու բաձիրնակն (blouse), գործաւորաց բուրդէ կամ չոխայէ զգեստները՝



իրենց համար անտարակոյս մեծ զարդարանաց ագանելիքներ պիտի համարուէին։ Հիները իրը զգեստ կը գործածէին ճառերու կեղևները և անոնց լայն տերևները։ յետոյ սկսա՞ն գործածել կենդանեաց մորբը, և վերջը վերջը սկսան հիւսել բուսական նիւթերը՝ ինչպէս կուռաց, և կամ կենդանական նիւթերը՝ ինչպէս ոչխարներու բուրդը։

Ոչ միայն ագանելիքն, այլ նաև արդուզարդն ալ բնազգում մ'է մարդկութեան. արարածոց մէջ մարդս է միայն որ ինքզինքը գեղեցկացներու համար կ'աւելցնէ իւր վրայ զարդարանքներ՝ որ շատ հին սովորութիւն մ'է. վասն զի կը գործածէին ժամանակաւ իրը արգուզարդ քառամանեակներ, ապարանցաններ քարէ, խեցիներէ, և աւելի ուշ՝ նաև մետաղէ։ Ամենէն աւելի վայրի ժողովութներն անդամ ջանացեր են և կը ջանան ձեռքերնէն եկածին չափ, ըստ իրենց ճաշակին, զարդարել իրենք զիրենք։ կարմրամորթք՝ կը ներկեն մարմիննին և երեսնին. Բոլինեղիացիք իրենց մարմայն վրայ կը նկարեն կամ կը դրեն և ասեղներով կը ծակծըկեն զայն, ինչպէս որ մինչև հիմայ Երուսաղէմ ուխտի գացողք պահած են նոյն սովորութիւնը։ Օթենթացիք իւզ կամ ճարպ կը քսեն. և գեռ ուրիշ շատ վայրի ազգեր, թէ արք և թէ կանայք քթերնէն կամ շըթունքնէն օղակներ կը կախեն։

Մազերու զարդարանքն ևս սովորութիւն եղած է ամեն ազգաց մէջ. այսպէս թէ վայրենիք և թէ քաղաքակրթեալ ազգերը կը գործածեն շատ տեսակ օճանելիքներ, գու-


նաւոր փոշիներ, թռչնոց փետուրիներ, ուշունքներ կամ փաղփուն գոհարեղէններ՝ զարդարելու համար մազերնին, զգեստնին, և այլն։

Հարցմունք. — Հին մարդիկ ի՞նչ զգեստներ կը գործածէին. — Հին ատեն մարդիկ արգուզարդ ունէին. — Մազերնին ինչո՞վ կը զարդարէին։

6. — Արդուզարդի սեղման.

Արդուզարդ ըսելով կը հասկնանք ամենապարզ զարդ մը, որ մաքրութեան և առողջութեան համար ամեն մարդու կարեսը է։ Այս բանիս յատկացած սեղանին վրայ պէտք է գտնուին սպունիք մը, օձառ, աանոր, վըրձին, ատամնադեղի շիշ մը։

Սպունգը ծովէ կ'ելլէ որ սոսորին դասու կենդանիներին է. Ժայռերու յարած կ'ապրի ծովու մէջ, և գեռ ողջ եղած ժամանակը եթէ գոչինք՝ կը կծկի. այլ և այլ տեսակներ կան որք իրարմէ շատ կը տար-բերին, ինչպէս են հասարակները և յարդիները։ Երբեմն զասոնք եռաժանիով կը ժողվեն, դոր կ'երկնցունեն դէպ 'ի ծով և ժայռին վրային կը փրցունեն սպունգը՝ որ ջրոյն երեսը կ'ելլէ. սակայն այս կերպով կը պատոի ըս-



Սպունգ:

պունդը և կ'ապականի. այդ պատճառաւ յարգի տեսակները ժողվելու համար, վարժ անձինք կ'իջնեն ծովուն յատակը և ձեռօք կը փրցունեն ժայռերէն։ Սպունդը ժողվելէ քանի մ'օր վերջ, կը հանեն վրայէն դոնդողային նիւթերը, կը ձգեն յրոյ մէջ և կը ճզմեն՝ մաքրելու համար նեարդերը պատող կակուղ նիւթերէն. յետոյ կը լուան կրկին անդամ յրախառն ֆֆլրական թրուռուով (acide sulfureque)։


Օձառը պատրաստելու համար կ'եռացնեն կալցոյ (potassium) կամ նատրի (sodium) լուծում՝ պարաբու մարմնոյ (corps gras) մը հետ, ինչպէս են ձեք, արմաշենցոյ իշղ, և այլն. հեղուկը պաղելէ վերջ՝ օճառը կը սկսի լուզալ ջրոյն երեսը, կը ժողվեն, կը չորցունեն զայն և մանուշելերոց մէջ կը ճզմեն։ Սրդուզարդի օճառին մէջ կը խառնեն միանդամայն ծաղիկներէ ելած հոսառէտ նիշքեր և գոյներ։

Սանտրը կը շինեն տօսախով, եղիւրներով, կրիաներու պատեաններով, սոկրով, փղոսկրով, և այլն։ Փղոսկրը սովորաբար փղերու ակռան է, բայց ծովափղերն (morse), ձիագետիներն (hippopotame), և ուրիշ կենդանիք ալ կու տան փղոսկր։ Փղոսկրով կը շինեն դանակներու կոթեր, վրձիններ, սանտրեր, և դեռ անթիւ առարկաներ։ իսկ կրիաներու պատեաններով շինելու համար այս բաներս, նախ կը կակլցունեն դանոնք եռացած ջրոյ մէջ՝ որով կ'ըլլայ գիւրակոր, և յետոյ ուզած ձեւերնին կու տան։

Ս.յու և ասոնց նման նիւթերով սանտր շինելու համար՝ նախ ձեւ կու տան, և յետոյ

բոլորաձեւ փոքրիկ սղոցով մը ակռաները կը ձեռն։

Վրձինը կը բաղկանայ երկու մասերէ, յրացանակ և մնագ. յետինս կ'ըլլայ սովորաբար խոզի մազէ, ձիու բաշէ, և կամ ուրիշ կենդանեաց մազերէն։ իսկ շրջանակը կրնայ ըլլալ սոկրէ, փղոսկրէ, վայտէ, և այլն. ասոնց ուզած ձեւերնին տալէ վերջ, կը բանան շրջանակին վրայ կանոնաւոր ծակեր, որոց մէջ ինսամքով կը տեղաւորէ աշխատաւորը վըր-



Կրտայ։

ձնոյն մազերը. այդ գործողութիւնը աւարտելէ յետոյ մկրատով կը հաւասարեցընէ ասոնց ծայրերը։

Ասամենադեղը կը պատրաստեն ալքոհով՝ սակաւ քանակութեամբ խառն բարկ բացախի հետ, և կ'անուշահոտեն անանուխի իսկորեամբ (essence de menthe)։

Հարցմունք. — Ի՞նչ կը հասկնաս արդուզարդ ըսելով. — Արդուզարդի սեղանի մը վրայ ի՞նչ բաներ պէտք է որ գտնուին. — Սպունդն ի՞նչ է և ուսկից կ'ելլէ. — Օճառն ի՞նչպէս կը պատրաստեն. — Սանտրն ինչով և ի՞նչպէս կը շինեն. — Վրձինը քանի մասերէ կը բազկանայ և ի՞նչպէս կը շինուի. — Ստամուադեղը ինչով կը պատրաստեն:

7. — Ատամունք.

Եթէ ձգենք քացախի մէջ ակռայ մը՝ կը սկսի կակզնալ և լուծուիլ. նոյնը բերնին մէջ կը պատահի երբ մարդ ուշ չի դնէ անոր մաքրութեան. վասն զի կը ձևանան բրուռշտներ (acides) որք կը յարեն և կ'առականեն ակռաները. ասկից կը սկսին փտիլ, սասախկ ցաւեր յառաջ գալ, մինչև որ կը ստիպուի մարդ հանել տալ ակռան՝ ցաւէն աղատելու համար: Հետևարար ամեն օր լուալու է մարդ իւր բերանը՝ որպէս զի ցաւերէ աղատ ըլլայ: Լաւագոյն է որ առողջապահական միջոցներով հիւանդութեանց դէմուանուի, քան թէ մարդ իւր առողջութիւնը բժշկէն յուսայ:

Մարդ հիւանդութենէ աղատ ըլլալու համար, պէտք է կանոնաւորէ իւր կերակրոյ ժամերը. կերած կերակուրներն ըլլան առողջարար և չափաւոր, պէտք չէ չափազանց ուտել. ապա թէ ոչ անմարսողութիւն կը պատճառէ և տեսակ տեսակ հիւանդութիւններ առաջ կու գան. կը փճանան թէ ստամիքան և թէ աղիքներն:

Կերակուրներն պէտք են լաւ եփուած ըլլալ, մանաւանն միւսը՝ որով գիւրաւ ալ կը մարտուի. և եթէ վրան գտնուին մանր ճճիներ, որոցմով կրնայ հիւանդութիւն գոյանալ մարդուս ներսը, կը սատկին միսը լաւ եփելով:

Հարցմունք. — Մարդս պէտք է որ իւր ակռաները մաքուր պահէ. — Ի՞նչ զգուշութիւն պէտք է ընել մարդս աղատ ըլլալու համար հիւանդութենէ. — Ուտելու համար միսը պէտք է որ լաւ եփուի:

8. — Միս եւ Ռսորդութիւն.

Միսը տաք-արիւն կենդանեաց մարմնոյն կակուղ մասն է. ասիկայ հացի չի նմանիր, վասն զի հացը ամեն օր ամեն մարդ կ'ուտէ, և ամեն կլիմայի մէջ օգտակար և սննդարար է. բայց միսը կլիմաներու համեմատ չափով մը կրնայ ուտուիլ. ինչպէս բևեռային կողմերը աւելի առողջարար է մարդկանց, մանաւանդթէ անհրաժեշտ ալ է՝ ուր կանաչեղինը կը պակսի: Ընդ հակառակն որչափ որ դէպ 'ի հարաւ մօտենանք, այդ տեղերու բնակչաց՝ կանաչեղինք աւելի սննդարար և օգտակար կը համարուին, և մանաւանդ հասարակածի կողմը:

Գարձեալ, ամառ եղանակի մէջ կանաչեղինք և ընդեղինք առատ գտնուելով, մնոյ գործածութիւնը կերակրոց մէջ նուազ զգալի կ'ըլլայ, ընդ հակառակն ձմեռը մարդիկ մնելէն կերակրոց աւելի պէտք կը զգան:


Որսի կենդանեաց մոերն ալ կ'ուտութին, և մարգուս մննդարար և առողջարար են: Հին ատեն կրկին նպատակաւ կ'ընէին որսորդութիւնը. նախ՝ պաշտպահնելու համար ինքզինքնին կենդանեացմէ, և երկրորդ՝ աւելի ուրնդարար կերակուր մը գտնելու համար. ժամանակ անցնելով որսը մարգկանց զուարծութիւն և մոաց բթափում մ'եղաւ: Որսորդութիւնը շատ հին արուեստ մ'է. հին ժողովուրդները որսորդք էին, և կան գեռ այսօր ալ վայրի ժողովուրդներ՝ որք որսով միայն կ'ապրին:

Հին որսորդաց զէնքերը սրածայր կարծր քարեր էին՝ փայտէ ունելիքներով, տէզեր կամ նիզակներ՝ զորոնք կը պատրաստէին սրածայր փայտերով, ձկան փուչով, ոսկրով կամ կենդանեաց ժանիքներով, լախտ՝ զոր կը շինէին կարծր փայտով կամ քարով, որոնց փայտէ ոնելիքներ կը յարմարցունէին. պարաստիկ, նետ, յետոյ զէնք՝ պղընձանէ (bronze), պղընձէ և երկաթէ: Հիմակ որսորդքը ընդհանրապէս հրացան կը գործածեն:

Որսը օգտակար է երբեմն՝ չնչելու համար վնասակար կենդանիները, ինչպէս գայլը և աղուէսը որք ոչխարներու և հաւերու թշնամի են և զանոնք կը ջարգեն. նոյնպէս կինձը (sanglier) որ գաշտերու և բուսաբերութեան մեծամեծ վնասներ կը հասցունէ:


Միջին գարու մէջ թագաւորներու և ազնուականաց միայն կը պատկանէր որսորդութիւնը. հիմակ ամեն մարդու առ հասարակներուած է, միայն թէ պէտք է հրաւանագիր մ'ունենակ: Ասկից զատ, ամեն տէրութիւն

ժամանակ մը սահմանած է որսորդութեան համար, որպէս զի կենդանեաց ցեղերը բոլորավին չի չնչուին աշխարհիս վրայէն, և մշա-



Գոյլ:


կեալ երկիրները ոտնակոխ չըլլան. այն որ առանց հրամանի և արդիլեալ ժամանակաց մէջ



Ազուէս:

որսորդութիւն կ'ընէ, մեծամեծ տուգանքներու կ'ենթարկուի:

Եղած են և կը գտնուին ներկայապէս ժողովուրդներ որք մարդու միս կ'ուտեն, և մարդակեր կ'ըսուին. ինչպէս են Հնդկաց քանի մը ցեղերը, և Բոլինեղիոյ քանի մի կղղեաց բնակիչները՝ որք դեռ կը շարունակեն:



Կինձ:


Մայ գործածութիւնը պատճառ եղած է հնարելու քանի մի տեսակ արուեստներ, ինչպէս հաշարութորիշն, կենդանարութորիշն, ապիտագործորիշն (charcutier), և այլն:

Հարցմունք. — Ի՞նչ է միսը և ո՞ր երկիրներու մէջ աւելի կը գործածուի. — Միսը ո՞ր եղանակի մէջ աւելի կ'ուտառի. — Հին աւեն ի՞նչ նպատակաւ կ'ընէին որսորդութիւնը. — Որսորդութիւնը հի՞ն արուեստէ, և ի՞նչ զէնքեր հնարած էին որսորդու-

թեան համար. — Օրտակա՞ր է որսորդութիւնը. — Ամեն մարդ կրնայ որսորդութիւնընել ամեն եղանակի մէջ. — Որո՞նք կ'ըսուին մարդակեր. — Մայ գործածութիւնը ինչ տեսակ արուեստներ հնարել տուած է:

9. — Զուկ.

Ծովիերու, գետերու, գետակներու, լճերու, լճակներու և մինչև խոկ առուակներու մէջ կը գտնուին մարդուս սննդարար կերակուրներ: Գորտերը որ ձուկ չեն, բայց ջրերու մէջ




Գորտ:

կամ անոնց եղերացը վրայ կ'ապրին, մարդկանց սննդարար, թեթև և զովացուցիչ կերակուր կ'ըլլան:


Գետակներէն և գետերէն կ'ելլեն անոյշ ջրերու ձկներ, ինչպէս կարմրախայտ (truite), կորնկաձուկն (brochet), ծածան (carpe), լուդ (lotte), օձաձուկն (anguille), խարակաձուկն (goujon), և այլն: Բայց ասոնց որսորդութեան

համար ալ, ինչպէս վայրի կենդանեաց, յաւ տուկ ժամանակներ որոշուած են, և մարդիկ ուզած առեննին չեն կրնար որսալ:




Փոքր ծածան:

Գետակներու մէջ կը գտնուի ողորկապատեսն (crustacé) կենդանի մ'ալ, այն է խեցգետինը (écrevisse), որոյ միուլ համեղ է և ազնիւ: Ծովիբու մէջ ալ կը գտնուին խեց-




Ոճածուկն:

գետիններ՝ որք գետակներու մէջ գտնուածներէն աւելի մեծ են, և կ'ըսուին աստակոս (homard), և մկրատաձև թաթեր ունին: Կայ ասոնց ուրիշ մէկ տեսակն ալ, այն է կարսրոս (langouste), բայց ասոնց թաթերը մկրատաձև չեն:



Ոճածան:


Ծովերէն կ'ելլեննաև կակդամորթեր (molusque), ինչպէս ոստրէ (huître), խարուկն (moule), և անթիւ տեսակ ձկներ, որոց մէջ նշանաւորներն են ձողաձուկն (morue), տառեխ (hareng): Չողաձուկը կ'աղեն և կը չորցունեն.



Խեցգետին:

Իւր լեարդէն կը հանեն իւզ մը որ կ'ըսուի ձողաձկան լեարդի իւղ (huile de foie de morue) և բժշկութեան մէջ կը գործածուի սոէպ՝ կուրճքի և արեան հիւանդութեանց համար: Կ'աղեն նոյնպէս նաև տառեխը:

Ջանացած են որ ձկները արուեստով բազմացնելու միջոցներ գտնեն և գտած են. այս արուեստը կ'ըսուի ձկնարուծորին. կամ թէ ըսենք, այնպիսի եղանակաւ մը կը պատրաստեն ջուրը՝ որ կարենայ նպաստել ձրկանց բազմանալուն, ինչպէս որ կը պատրաստեն երկիր մը՝ ցորենի կամ ուրիշ արմուեց համար: Այս արուեստը հնուց ՚ի վեր ջինացիք հնարած էին. Ջինացւոցմէ առին զայն բոլոր միւս աղգերը:




Ոստրէ:

Հարցմուշնք. — Ջրերու մէջ մարդուս սընընդարար կերակուրներ կը գտնուին. — Գետակներէն և գետերէն ի՞նչ տեսակ ձկներ կ'ելլեն. — Սյմեն եղանակի մէջ ձուկ կրնայ որսացուիլ. — Ծովերէն ելած ձկներու մէջ նշանաւորները որոնք են. « Գետակներու և ծովերը միջի ձկներէն զատ ուրիշ ի՞նչ կենդանիներ կը գտնուին. — Ջինաբուծութիւնը ի՞նչ արուեստ է և ո՞ր աղգը դտած է:

10. Կաթ. — Կարագ. — Պանիր.

Կաթը սննդարար կերակուր մ'է մարդկանց և կենդանեաց. սովորաբար դիւրամարս է ամեն ստամոքսներու, մանաւանդ երբ եռացած ըլլաց: Աղէկ տեսակ ըլլալը կը հասկցուի՝ երբ



Տառեխ:

Եռալէն վերջ նորէն ճերմակ կը մնայ, պահելով իւր հոտն ու համը: Ջրէն աւելի ծանր է, և խառնուրդ մ'է երեք տեսակ գոյացութեանց, որք են կարագ, պանիր և շիձուկի:

Կարագը շինելու համար կը լեցնեն կաթը բերանաբաց տակառի մը մէջ և կը թողուն.

սերլ կաթին երեսը կ'ելլէ, կը ժողվեն զայն և կը լեցնեն ծփոցի (baratte) մէջ: Երկու տեսակ ծփոց կայ, մին ոոքի վրայ կանգուն, որոյ խոռվը կամ ծածկոցը բացուածք մ'ունի և անոր մէջ կը մանէ գաւազան մը՝ որ կը ծառայէ սերը ծեծերու. միւսը կը բաղկանայ՝ տուանցքներու վրայ կեցած տակառէ մը՝ որ ունելիքով կը թաւալի ինքն իր վրայ: Շարժմամբ կը բաժնուի կարագը շիճուկէն և գունս գունս կը լուսպայ հեղուկին երեսը: Կը ժողվեն կարագի այս գունսերը և ճմիելով կը լուսն պազ ջրոյ մէջ, որպէս զի դեռ մնացած կաթը՝ կծու համ չի տայ կարագին. այսպէսով կ'ըլլոյ գեղեցիկ դեղնագոյն, և կ'ունենայ անոյշ և ախորժելի համ մը:

Պանիրը պատրաստելու համար կը մակարդեն տաքցած կաթը՝ աւելցնելով վրան քիչ մը քացախ և խախաց (présure) որ կ'ելլէ խախացոցէն (caillette) և չորրորդ ստամփուն է գտոնուիներու և որօնող կենցանեաց: Մակարդը ձեսնալէ ետքը՝ կը լեցունեն զայն ծակտիքներ ունեցող անօթներու մէջ և կը բաժնուի պանիրը:

Հարցմունք. — Ի՞նչ է կաթը և քանի՞ տեսակ նիւթերէ կը բաղկանայ. — Կարագը ի՞նչպէս կը շինեն. — Պանիրը ի՞նչպէս կը պատրաստեն:

11. — Կոլիատ. — Թէյ. — Սուրճ.

Կոլոնատը (chocolat) կը պատրաստեն ծառի մը հատերէն՝ խառնելով զանոնք շաքարի հետ: Ծառը որ կակայենի (cacaoyer) կ'ըսուի՝ չարաւային Ամերիկոյ տաք երկիրներուն մէջ կը բուսնի, և իւր հատերը կակայ (cacao) կ'ըսուին: Այս հատերը՝ սուրճի հատերուն նման կը խարկեն թիթեղեայ գլաններու մէջ, որպէս զի մաշկը վրանէն փրթի, և ախորժելի հոտ և համ մ'առնուն: Խարկենէն վերջ կ'ազան, կը զանգեն, բայց առանց աւելցնենելու վրան չուր կամ ուրիշ հեղուկ մը, վասն զի հատերը արդէն իրենց մէջ ճերմակ իւր մ'ունին որ կոգի կակայի (beurre de cacao) կ'ըսուի: Յետոյ շաքար կ'աւելցունեն զանդուածին վրայ, երկրորդ անգամ կը թրմեն և կ'ունենան կողոնատ:

Այս գործողութիւնը տաքցած քարէ սեղանի մը վրայ կատարուելով և զանգուածն ալ գեռ տաք ըլլալով, լցծ վիճակի մէջ՝ կը լեցունեն կաղապարները, ուր պաղելով կը պնդանայ. յետոյ կը ծրարեն անագէ նուրբ թիթեղներու մէջ:

Կոլոնատը թէ այսպէս կ'ուտուի և թէ սուրճի նման եփելով. յետինս ախորժելի և առողջարար ըմպելի մ'է, բայց ոչ մննդարար, միայն թէ ախորժակ կը բանայ:

Մեծ քանակութեամբ պատրաստելու համար յատուկ մեքենայ մը կայ, որոյ մէջ կական կ'անցնի հոսիչէն (vanneuse) ի խարկիչը (grilloire). յետոյ հասնելով մանրիչ (broyeuse)

ըսուածին մէջ՝ կը խառնուի շաքարի հետ։
Այսպէսով կորոհատը կը հանեն գործիքն և
մեքենայով մը կը լեցունեն կաղապարներու
մէջ։



Թէյի ծառ։

Թէյի ծառը զինու և ձարոնի մէջ կ'աճի,
և վայրի վիճակի մէջ եօթ ութ մեդր կը

բարձրանայ։ բայց որպէս զի կարենան գիւ-
րութեամբ ժողվել անոնց տերեները՝ մինչե-
երկու մեդր կը թողուն որ բարձրանան։ Տե-
րեները մութ կանաչ գոյն մ'ունին, ձուածե-
նն և ատամնաւոր, անութնին փոքրիկ ճեր-
մակ ծաղիկներով։ գարնան և աշնան կը ժող-
վեն անոնց թարմ տերեները, կը բաժնեն
ըստ իրենց մեծութեան։ թարմ և փոքրիկ
տերեները՝ ամենէն ընտիր և յարդի թէյը
կու տան։

Թէյը պատրաստելու համար այս տերենե-
րէն, կը լեցունեն հնոցի վրայ գտնուող տա-
պակներու մէջ, և շարունակեալ կերպով կը
խառնեն որպէս զի չայրին, որոնք քանի մը
վայրկենէ կը սկսին գալարիլ և ճարճատիլ։
այն ատեն կ'առնուն զանոնք և կը տարածեն
սեղաններու վրայ՝ ուր աշխատաւորք կը ճըմ-
լեն և կը գլորեն ձեռքերնուն մէջ։ Այս բանս
այլ և այլ անգամ կրկնելէ ետքը, երբ տերե-
ներն լաւ մը գալարուած են իրենք իրենց
վրայ և չորցած՝ գործողութիւնը կ'աւարտի։
Սակայն թէյի անուշահոտութիւնը աւելցնե-
լու համար, կը խառնեն հետը հոտաւէտ բոյ-
սեր կամ նիշքեր, որ արուեստաւորաց գաղտ-
նիքն է։

Երբ ըմնելի գործածուած թէյը կը պատ-
րաստեն եռացեալ ջրոյ մէջ թրջոց գնելով
զայն, և սովորաբար տաք տաք կը խմեն. ա-
խորժելի համ մ'ունի և գրգռիչ է ջղերու։

Երկու տեսակ թէյ կայ, սեաց և կանաչ։
Կանաչը աւելի յարդի է և ընտիր, և միւսէն
աւելի գրգռիչ։

Սրձենին (caféier) վերին Եգիպտոսէն եկած

է : Այս տեղի բնակիչները ժամանակաւ իրենց ճամբորգութեան և պատերազմի միջոց ասոր հատերը բոհրելով և աղալով՝ ճարպի հետ զանդել կու տային և գնդակներ շինելով կ'ուտէին, վասն զի ոյժ կու տար իրենց՝ քանի որ կանոնաւոր կերակուրնին կը պակսէր : Եգիպտոսէն անցաւ յԱրարիա, մանաւանդ-



Սրձենի :

Մէքքէի շրջակայքը, և հիմայ ամենէն յարդի և ընտիր սուրճը Մէքքէէն կու գայ : Սըրծենին տասը մեղք բարձրութիւն ունի, երկային և որածայր տերեններով, ճերմակ և անուշահոտ ծաղկով. պտուղը կարմիր ծիրանդգոյն է և երկու հատ ունի իւր մէջ :

Սուրճը պատրաստելու համար կը ժողվեն հատերը, կը լեցունեն զանոնք երկաթեայ գլանաձեւ անօթի մը մէջ, և կը գարձունեն կրակի հնոցին վրայ . երբ հատերը ամբողջովին կը տաքնան և հաւասար կը գունաւորովին, ըսել է թէ լաւ բոհրուած են. կը պարպեն անօթը, կը տարածեն հատերը, կը պաղեցունեն փութով և լաւ գոյցւած անօթի մը մէջ կը պահեն՝ որպէս զի անուշահոտութիւնը չի կորանցունէ : Եփելու համար կ'աշան նախ փոքրիկ աղօրիկով մը :

Սուրճը թէյէ աւելի գրգռիչ է ջղերու, ոյժ կու տայ՝ բայց չի մնուցաներ :

Հարցմունք. — Ի՞նչ է կորհատը և ուսկից կ'ելլէ. — Ի՞նչ եղանակով կը պատրաստեն զայն և ի՞նչպէս կ'եփեն և ի՞նչ յատկութիւն ունի. — Ի՞նչ է թէյը և ուսկից կ'ելլէ. — Ի՞նչպէս կը պատրաստեն և ի՞նչպէս կ'եփեն. — Ի՞նչ է սուրճը և ի՞նչ բանէ կ'ելլէ. — Ի՞նչպէս կը պատրաստեն զայն և ի՞նչպէս կ'եփեն . — Ի՞նչ յատկութիւններ ունին թէյ և սուրճ :

12. — ԱՆ.

Աղը կը գտնուի իբր հանք՝ ապառաժներ ձևացներով և կ'ըսուի աղորձակ (sel gemme). այս ապառաժները երբեմն բարձր են, ուսկից կոփածոյ քարերու (pierre de taille) նման կտրելով կը հանեն աղուժակը. երբեմն ալ-

Հողոյն տակ կը գտնուին, և հանելու համար վերէն ջրհօրներ կը բանան։ կան տուներ, եկեղեցիներ, և այլն, որք աղի հանքերուն մէջ շինուած են։

Աղը հողոյն տակ գտնուած հանքերէն հանելու համար, կը փորեն նախ ապառաժը և ջուր կը լեցունեն. ջուրը իւր մէջ կը լուծէ աղը. այն ատեն ջրհան մեքենաներով կը մղեն այս ջուրը՝ խուրձ խուրձ կապուած ճիւղերու շեղչին վրայ, ուսկից կամաց կամաց կաթելով կը սկսի գողորշիանալ. թանձրացած ջուրը կը հաւաքեն, կը լեցունեն կաթսաներու մէջ և կրակով կը գողորշիացնեն, ջուրը կը ցնդի և կը մնան աղի բիւրեղներն։

Կան նաև աղի ջրոյ աղբիւրներ. այս ինքն, ջուրը գետնի տակէն անցած միջոց հանդիպելով աղի հանքի մը՝ կը լուծէ անկից իւր մէջ, և երբ ուրիշ տեղէ բղիսէ նոյն ջուրը՝ կ'ըլլայ աղի ջրոյ աղբիւր. այս աղբիւրներէ ալ կը հանեն աղը։

Դարձեալ, ծովի ջրէն ալ աղ կը հանեն. բաւական է որ այս ջրերը կաթսաներու մէջ գողորշիացնեն. բայց որովհետեւ շատ թանկ կ'ըլլայ եթէ կրակով կատարեն այս գործողութիւնը, այն պատճառաւ կը գողորշիացնեն նախ այդ ջրերը արեու ջերմութեամբ և հովով։ Այս գործողութիւնը կատարելու համար, ամառ եղանակի միջոց ծովու ջուրը կը հաւաքեն աւազաններու մէջ. ջերմութեամբ և հովով ջուրը կը գողորշիանայ և աղը բիւրեղացած կը նատի աւազանին յատակը. կը ժողվեն, կը լեցունեն անօթներու մէջ և կը գործածեն։

Աւելի նուրբ աղ ստանալու համար, պէտք է մաքուր ջրոյ մէջ կրկին անդամ լուծել պատրաստուած աղը՝ և գանդաղութեամբ գոլորշիացնել դարձեալ կաթսաներու մէջ. և երբ կաթսային մէջ մնայ գեռ քիչ մը ջուր, կը զատեն աղը և կը թողուն այդ մնացեալ ջուրը, որպէս զի աղտեղութիւնները չի խառնուին աղին հետ։

Աղը ամառ եղանակի մէջ կը պատրաստեն՝ քիչ ծախք և խնայողութիւն ընելու համար։ Այս նպատակաւ ծովեղերաց վրայ կը շինեն ծովափնեայ աղաւարաններ (marais salants), ուր կը հանի ծովի ջուրը և գողորշիանալով կը թողութիւր աղը։

Աղը համեմելիչ է կերակրոց և կը դիրքացնէ մարտողորիւնը. անկուրա կը պահէ միսը և ձուկը։ կենդանիք կը սիրեն աղը, և օգտակար ալ է երբեմն երբեմն տալ իրենց, մանաւանդ երբ տեսակ տեսակ և զօրացուցիչ մնունդներ չունին ըստ բաւականի, այն ատեն աղը ախորժնին կը բանայ։


Հարցմունք. — Աղը ո՞ր տեղեր կը գըտնուի. — Ապառաժներէն ի՞նչպէս կը հանեն աղը. — Աղային ջրերէն և ծովի ջրէն ի՞նչպէս կը հանեն. — Նուրբ և բարակ աղը ի՞նչպէս կը պատրաստեն. — ի՞նչ են ծովափնեայ աղարան, ըստածներն. — Աղը ի՞նչ յատկութիւններ ունի և ի՞նչ բանի կը գործածուի։

13. — Շաքար.

Շատ մը պատուղներ իրենց մէջ շաքար կը բովանդակեն, ինչպէս գեղձ, տանձ, խնծոր, շագանակ, սեխ, և այլն. շաքարը կը գտնուի միանդամայն ընդեղինաց մէջ, մանաւանդ բանցարի և շաղգաւի արմատոց մէջ. կայ նաև մսրացորենի մէջ, և այլն: Բայց 'ի բնութեան կը գտնուի գրեթէ զուտ շաքար մը, այն է Մեղրը զոր կը պատրաստեն մեղուք՝ իրը իրենց ձմեռուան պաշար: Մեղրը շինելու համար մեղուները անուշահու ծաղկանց ծուծը կը հաւաքեն:

Շաքարը կը պատրաստեն տաք երկիրներու մէջ շաքարի եղեգով. իսկ միւս երկիրներու մէջ՝ քանի մի տեսակ բանցարներուց արմատներէն: Շաքարի եղէգը կը մանրեն, գըլաններու մէջ կը ճմին և ելած հիւթը կը ժողվեն: իսկ բանչարի արմատը բանջարներու արմատները քերիչով կը մանրեն, կը շինեն խիւս մը և լեցընելով կտաւէ պարկերու մէջ կը ճմին՝ որպէս զի հիւթը ծորի: Թէ՛ շաքարի եղէգով և թէ բանջարներով, շաքարի պատրաստութեան եղանակը նոյն է:

Կը սկսին տաքցունել ասոնց ծուծը մինչեւ մակարդի, այսինքն, մէջը գտնուող անլուծանելի նիւթերը վրան հաւաքին. կը ժող-



վեն այս նիւթերը և մնացած հեղուկը կը մղեն կտաւէ կամ ոստայնէ, որով կը մնայ շաքարացեալ ջուր մը յստակ և գեղնադոյն՝ զոր կը տաքցունեն մեծ կաթսաներու մէջ. Ջրային մասը գոլորշիանալով՝ կը մնայ ծանր հեղուկ մը որ է օջարւակ. հանդարս կը թուղուն որ բիւրեղանայ, յետոյ կը ժողվեն բիւ-



Շաքարի եղէգ:

Եղէ հեղուկը իւր մէջ ջուր չի բովանդակէ, պաղելով՝ շաքարի բիւրեղները կը հանգչին, բայց կը մնայ սեագոյն զանգուած մը:

41

Կը լեցունեն այս զանգուածը մաղի մը վրայ, կը սկսի վաղել թանձր օշարակը որ մեղրացուր (mélasse) է՝ և դեռ իւր մէջ շատ շաքար կը բովանդակէ. մաղին վրայ կը մնան շաքարի փոքրիկ բիւրեղներ՝ խակ շաքար (sucre brut կամ cassonade) ըստածն. վազած հեղուկը դառնու համար կը լուծեն ջրոյ մէջ և կը խառնեն կենդանական ածուխով (noir animal), որ իրեն կը քաշէ բոլոր գունաւոր նիւթերը. հեղուկը մզանցէ անցունելով՝ կը սկսի վաղել օշարակ մը՝ պայծառ և գրեթէ անդոյն:

Խնամքով կը տաքցունեն այս օշարակը որպէս զի ջրեղէն մասը ցնդի, և երբ հեղուկը կը թանձրանայ՝ կը լեցունեն զայն շաքարի գլուխներու (pain de sucre) ձեւ ունեցող կազապարաց մէջ:

Շաքարը կը գործածուի խմնրեղէններ շինելու արուեստին մէջ, պտուղներ եփելու, կոլոհատ պատրաստելու, սուրճ եփելու, սեր շինելու, և այլն:

Հարցմունք. — Շաքարը ո՞ր պտուղներու մէջ կը գոնուի. — Ի բնութեան կայ զուտ շաքար մը. — Շաքարը գլխաւորաբար ի՞նչ քաներէ և ի՞նչ կերպով կը պատրաստեն. — Ի՞նչ է մեղրաջուրն և խակ շաքարը. — Շաքարը ի՞նչ գործածութիւններ ունի:

14. — Համեմուեր.

Համեմուեր կամ համեմունք (assaisonnement) կ'ըսուին այն նիւթերը որ կերակրոց մէջ կը դրուին զանոնք ախորժահամ ընելու համար հոտառութեան և ճաշակելեաց. այսպէս են առ և շաքար որոց վրայ արգէն խօսեցանք:


Կան դեռ ուրիշ շատ մը համեմեր, ինչպէս իշղ, քացախ, պղպեղ, մանանեխ (mostarde), քեղակարոս (cerfeuil), քարիչուն (estragon), սոխ, սխոռոր:

Իշղը որ կը ծառայէ ազցան և ուրիշ կերակրներ համեմելու, ձիթենւոյ պտղէն կ'ելլէ՝ որ ձիքապտուշ կ'ըսուի: Գործողութիւնը կը կատարուի ազօրին մը մէջ, ուր երկանքարով կը ձմիեն հատերը, խիւսը կը լեցունեն պարկերու մէջ և ճզմելով կը վազցունեն խղը: Խղը կ'ելլէ նաև ուրիշ բոյսերէ, և շաքարի նման սննդարար է:

Քացախը կը պատրաստեն սովորաբար զինիէ, խնձորացրէ կամ գարեցրէ: Գործողութիւնը կը կատարուի տակարի մը մէջ որ երեք յարկ բաժնուած է, և իւրաքանչիւր յարկը ունի փոքրիկ ծակտիքներ. վերի երկու յարկերը խողովակներով կը հաղորդակցին արտաքին օդոյ հետ. միջին յարկը կը գնեն փիձի (hêtre) տաշեղներ որ կը նպաստէ քացախի խմորման: Վերի յարկին մէջ կը լեցունեն գինին՝ որ ծակտիքներէն կը սկսի կամաց կաթիլ փիձիի տաշեղներուն վրայ, կը թափանցէ անոնց մէջ, կը թժուի, և քացախ գարձած կ'իջնէ երրորդ յարկին յա-

տակը, և անկից ծորակի մը ձեռօք գուրսը գտնուող անօթդյն մէջ կը ծորէ :

Գիւղերը աւելի դիւրութեամբ կը պատրաստեն քացախը. այս ինքն, տաք տեղ մը կը դնեն քացախի փոքրիկ տակառ մը, և իւրաքանչիւր անդամ՝ որ շիշով մէջէն քացախ



Քացախ պատրաստելու տակառ :

Կ'առնուն, անոր տեղ կը լեցնեն տակառին մէջ շիշ մը գինի. և այսպէս իրենց քացախը միշտ անպակաս կ'ըլլայ :

Մանանեխը ծանօթ բոյս մ'է, և անոր շատ տեսակները կան. այս բուսոց հատերէն կը պատրաստեն մանանեխը, որ կրնայ ըլլալ սեռ կամ ձերմակ :

Կերակրոյ սովորական մանանեխը պատրաստելու համար՝ քացախի մէջ թրջոց կը դընեն սեաց հատերը, կը ճմիեն զանոնիք, և զանդուածը կը լուծեն գարեջլոյ քացախով: Ընտիր մանանեխը կը պատրաստեն ձերմակ հատերով. զանդուածին վրայ կ'աւելցունեն կարսո (persil), քեզակարսո, թարիսոն, ծոթրին

(thym), կինամոն (cannelle), սոխ և քիչ մ'ալ ձիթապտղոյ իւղ:

Պղպեղը Հնդկաստանի թփի մը պտուղն է զոր կը ժողվեն և կը չորցունեն. կծու համ մ'ունի, ջեռուցիչ է, այրիչ և համեմային: Պղպեղի կը նմանին նաև դարապղպեղ (pimento)




Պղպեղ:

Դարապղպեղ:

ment), գարնիի տերեւ և Հնդիկ ընկայդ (mustard), գարնիի տերեւ և Հնդիկ ընկայդ (mustard):

Կան համեմներ ալ որք զովացուցիչ են, սակայն պղպեղի նման կծուութիւն չունին. ինչպէս կարոս, քեզակարսո, ջերմատար (pimento)

пренел), կինամոնին, մեխակ, համեմուկ
(vanille) կիտրոնի կեղև, և այլն:
Հնդիկ ընկուզգենին Հնդկաստանի տաք դա-



Հնդիկ ընկուզգենի:

ւառներուն մէջ կը բուսնի, և հիմայ Ամերիկոյ կամ ուրիշ տեղեաց մէջ ալ կը մշակուի.
ծիրանի նման խոչոր պտուղներ կ'ունենայ,
և կուտը կ'ըսուի հնդիկ ընկոյդ:

Մեխակը՝ (clous de girofle) մեխակենի (giroflier) ըսուած բարձր ծառի մը ծաղիկներուն բողբոջն է, և այս ծառերը կը գրանուին Ովկիանիոյ Մոլուգեան կղզեաց մէջ. դասոնք կը ժողվեն այդ ծառերուն վրայէն և կը չորցունեն:

Կինամոննիլ՝ տեսակ մը ինկաւէտ դարնիի կեղեն է որ դարիսենի (cannellier) կ'ըսուի:

Համեմոնչիլ որ բուսոյ մը պտուղն է, կը նմանի երկայնաձև թարմ լուրիայի, որոյ մէջ շարուած կը գտնուին շատ մը փոքրիկ սեաւ հատեր:


Ոյս ամեն համեմները որչափ որ ախորժահամ կ'ընեն կերակուները և մարդուս ախորժը կը բանան, եթէ չափազանց գործածուելու ըլլան՝ վնասներ առաջ կը բերեն և գործարանաց վրայ իբր թոյն կ'աղղեն:

Հարցմունք. — Ի՞նչ են համեմոնք ըսուածնիս և որոնք են. — Իւզը ի՞նչ բանէ կ'ելլէ և ի՞նչպէս կը հանեն. — Քացախը ի՞նչպէս կը պատրաստեն. — Ի՞նչ է մա անեխը և ի՞նչպէս կը պատրաստուի. — Պղպեղը ո՞ւսկից կ'ելլէ. — Հնդիկ ընկուզգենին ո՞ւր կը գտնուի. — Մեխակը ո՞ր ծառին պտուղն է. — Ի՞նչ է կինամոննը և համեմուկը. — Համեմները եթէ չափազանց գործածուին՝ մարդուս վնաս կը պատճառեն:

15. — Վնասակար բայսեր.

Մացառներու վրայ կամ անտառներու մէջ կը գտնուին երբեմն գեղեցիկ, ախորժելի և հրապուրիչ պտուղննը. վնասակար են անոնք և պէտք չէ առանց գիտնալու ժողվել և բերան առնիլ. վասն զի շատ անգամ մահ կը պատճառեն:


Սակայն միայն պտուղները չեն. կան բոյսեր ալ որոց տերենները, ծաղիկները կամ արմատները թունաւոր են, կը կծեն ձեռքը,




Թունաւոր սունկ:

Կ'այրեն բերանը, կը խանդարեն ներքին գործարանները, և մահուան պատճառ կ'ըլլան: Զգուշանալու է մանաւանդ այն բոյսերէն որը կաթի նման հիւթ մ'ունին, ճերմակ կամ դեղնագոյն:

Սունկը որ կ'ուտենք՝ ունի իւր թունաւոր



տեսակները. մարդ առանց ճանշնալու պէտք չէ վստահութեամբ ուտէ դաշտերէ ժողվա-



Հաշակելի սունկ:

ծը, վասն զի շատեր մեռած են՝ առանց գիտնալու թունաւոր սունկեր ուտելով:

Հարցմունք. — Մնացառներու մէջ գտնուած ու կ իցէ պտուղները կ'ուտուի՞ն. — Բոյս մը իւր պտուղներէն զատ ուրիշ թունաւոր մասեր ալ կրնայ ունենալ. — Ո՛ւ կ իցէ սունկ կրնայ ուտուիլ:

16. — Գետնախնձոր.

Գետնախնձորն եկած է Ամերիկոյ Միացեալնահանդներէն, որուն մշակութիւնը տարածուած է հիմակ ամեն կողմ: Խոտեղէն բոյս


մ'է՝ ճերմակ կամ ծիրանեղոյն ծաղիկներով.
այս բոյսին արմատն է որ կը մեծնայ և կը



Գետնախնձորին բոյսը:


խոշորնայ, և մարդկանց կամ կենդանեաց
մննդեան կը ծառայէ. բայց պէտք չէ ժամա-
նակէն առաջ ժողվել
ուտելու համար, վասն
զի գեռ հասունցած
չըլլալովի խը մէջ թու-
նաւոր նիւթ կը բո-
վանդակէ:

Գետնախնձորէկ'ել-
լէ ալիւր մը որ փե-
կուշ (fécule) կ'ըսուի,
զոր կը խառնեն սովո-
րական ալիւրի հետ և կը պատրաստեն ազնիւ-
խմորեղէններ :



Գետնախնձոր:

Գետնախնձորը կենդանեաց մննդեան ալ
շատ օգտակար և գիրացուցիչ է. կը ծառայէ
նաև գիւրութեամբ մաքրելու շոգեշարժ մեքե-
նաներու կաթսաները, վասն զի կը կակըզցնէ
անոնց ներքին երեսին վրայ քարացած ջրոց
աղտեղութիւնները :



Փեկուդ:

Առաս գետնախնձոր ունենալու համար
պէտք է անոնց խոշորները քանի մը կտոր
ընել և հողի աակ ծածկել. բոյսը կը ծլի
անոնց աշքերէն և կամ կեղեէն :

Հարցմունք. — Գետնախնձորը ուսկից ե-
կած է. — Ի՞նչ աեսակ բոյս է և ի՞նչ բանի
կը ծառայէ. — Գետնախնձորէն ի՞նչ կ'ել-
լէ. — Ի՞նչպէս կրնանք առատ գետնախնձոր
ունենալ :

17. — Պարտէզ.

Կան տեսակ տեսակ ցանկապատեր որք պարտէզ կ'ըսուին :

Ծաղկանց պարտէզներուն մէջ ճաղիկներ միայն կը դարձնանուին. բանջարեղինաց պարտէզներուն մէջ՝ ընդեղնեներ (légumes). պըտղոց պարտէզին մէջ՝ պտղատոշ ճառեր, զորոնք կանոնաւոր կերպով և հաւասարաչափ բարձրութեամբ կը կտրեն. ասոնք սովորաբար պատին երկայնութեամբ կարգաւ տընկուած կ'ըլլան. խակ մրգաւաններու մէջ կը թողուն պտղատոշ ճառերը որ մեծնան առանց կտրելու :

Բայց եթէ փոքրիկ հողի կառը մ'ըլլայ՝ ուր մշակեն ամեն բան, պտղատու ծառեր, ծաղիկներ և ընդեղնեներ, այն ատեն պարտէզին մէկ մասը միայն կը պահեն ծաղիկներու, որ ճաղկոց կ'ըսուի :


Պարտէզը կը բաժնեն զատ զատ քառակուսիներ՝ թողով մէջտեղերնէն լայն ճառագարդ ձամբաներ. և այս քառակուսիները կը վերածեն նեղ երկայնաձև ածուներու, թողով մէջտեղերնէն նեղ ծառազարդ ճամբաներ. յետոյ քառակուսիներու և ածուներու եղերքները՝ երկայնութեամբ կը անկեն ծաղիկներ կամ խոտեր :

Բանջարեղինաց պարտէզին մէջ կը մշկուին շատ տեսակ ընդեղնեներ, ինչպէս կտղամբ, շաղգամ, ստեղլին, պրաս, սոխ, ոլոն, լուբիա, սիսեռն, գետնախնձոր, հազար, սեխ, ձմերուկ, և այլն :

Ոլոռը՝ ճիւղի վրայ պատասող բոյս մ'է. իւր ծաղկին կը յաջորդէ երկայնաձև պարկուած (gousse) մը, որոյ մէջ հատեր կը բովանդակուին :

Կաղամբի զանազան տեսակները առաջ կուգան՝ փոքրիկ վայրի կաղամբէն :

Պարտիզպանութեան արուեստին յառաջա-



Շաղկամ :


Նալովի և զարդանալով, ընդեղինաց վայրի տեսակներն այնքան բարւափած են, խոչորցած և անուշցած, որ մարդ գրեթէ չի կրնար հաւատալ թէ վայրի տեսակէ մը առաջ եկած ըլլան ասոնք :

Սեխար Ափրիկէն եկած է և լուրիան Հընդկաստանէն :

Հարցմունք. — ի՞նչ է պարտէզն և քանի տեսակ կ'ըլլայ. — ի՞նչ է ծաղկոցը. — ի՞նչ պէս կը շինեն պարտէզը. — Բանջարեղինաց պարտէզին մէջ ի՞նչ կը մշակեն. — Ոլոռը ի՞նչ տեսակ բոյս է. — Պարտիզպանութեան յառաջանալով ընդեղինաց տեսակները բարձրքած են. — Մեխը և լուբիան ուսկից եկած են:

18. — Պտուկ եւ հատումն ծառոց.

Եթէ կարենք ծառէ ճիւղ մը, պիտի տեսնենք որ անոր իւրաքանչիւր փոքրիկ ձիւղերուն ծայրը և տերեւոց անութները կան մանր



Արտեն:

Հաստատուն մարմիններ, թեփերով ծածկուած, սրածայր կամ բոլորածեն՝ որք կ'ըսուին պը-


տուկ (bourgeon) կամ աչք (yeux): Ծառը այս պտուկներով կը մեծնայ:

Պտուկները կը ձեանան ամառ եղանակի մէջ, և ձմեռն իրը մեռած կը մնան, սպասելով գարնան որ բացուին: Այս պտուկներէ ոմանք կ'ըլլան ձիւղի կամ տերև. այլք ձաղիկ և պտուղ: Առաջինք կ'ըսուին ձիւղերու պտուկը (bourgeons à bois), և են երկայնաձեւ. յետինք պտուղներու պտուկը (bourgeons à fruits), և են աւելի բոլորածեն:

Սովորաբար պտղոց պտուկները շուտ կը բացուին, այս պատճառաւ շատ մը ծառեր գեռ տերեւ չի



Պարկուէ:



Պտուկ:

տուած՝ ծաղիկներ կու տան և կը ծածկուին գարնան եղանակին:

Սակայն չի կարծէք որ ժամանակին առանց
ճիւղեր կտրելու այդ ծառերէն, իրենք իրենց
ծածկուած ըլլան այդափ ծաղիկներով. ծա-
ռոց ճիւղերը կտրելն մեծ արուեստ մ'է: Ա-
մեն տարի գարունէն առաջ արուեստաւորը
խնամքով կարած է այդ ծառերէն ձիշերու
պտուկներն՝ որք նախընթաց ամսուը չա-
փէն աւելի շատցած էին. և ջանացեր է կըր-
ցածին չափ պտղոց պտուկները թողու այդ
ծառերուն վրայ:

Հարցմունք. — Ի՞նչ է պտուկ կամ աչք
ըստածը. — Պտուկներն երբ կը ձեսան և
քանի տեսակ են. — Ո՞ր տեսակ պտուկներն
չուտ կը բացուին. — Ժամանակին պէտք է
կտրել ծառերու ճիւղերէն, և որ ճիւղերը կըտ-
րելու են:

19. — Տերեւք եւ անոնց գործածութիւնն.

Տերեւները բուսոց չնչառութեան գործա-
րաններն են:

Կան շատ մը բոյսեր որոց տերեւն կ'ու-
տուին՝ եփելով կամ առանց եփելու. ինչպէս
կաղամք, բրձնուկ (oseille), սպանախ, կո-
տիմ (cresson), կարոս (persil), հազար (lai-
tue), և այլն:

Այլք կը ծառայեն կենդանեաց մննդեան,
ինչպէս քնական մարգագետիններու մէջ բուս-
ող անթիւ տեսակ խոտերն. իսկ վայրի ա-
ռուոյտ (luzerne), եռատերեւնուկ (tréfle), առող-

չախոտ (sainfoin) կը մչակուին արուեստա-
կան մարգագետիններու մէջ:

Շերամորդը կը մնանի բբենիի տերեւնե-
րով:


Կան գեռ շատ տեսակ տերեւներ որ այլ և
այլ գործածութիւններ ունին. այսպէս ծիսա-
խոտի տերեւները չորցունելնէն վերջ կ'ոլորեն
և գլաններ (cigares) կը շնեն, կամ
մանրելով և ջար-
դելով ծխախոտ կը
պատրաստեն՝ ծխա-
փողեր և կ'ցնելու
կամ գլաննելներ (ci-
garettes) շնելու:

Լեղակենիի (indi-
gotier), և լրջա-
րուսոյ (pastel) տե-
րեւներէն կը հանեն
գեղեցիկ կապոյտ
գոյն մը:

Թէյի տերեւները շերամորդը թթեսիի տերեւ կ'ուտէ:
թուրջ զնելով (en
infusion) կ'ըլլայ ախորժահամ ըմպելի մը՝ որ
հիւսիսային երկրի ժողովուրդները շատ կը
գործածեն:

Կան գարձեալ շատ մը բուսոց տերեւներ,
որք բժշկութեան մէջ կը գործածուին, ինչ-
պէս նարինչենիինը (oranger), ծուաղենիին
(laurier-cerise), անանչուխին (menthe), սնկոյ-
րաստակին (belladone), մեխակենիին (giro-
ffier), ընկորզի, և այլն:

Վերջապէս շատ մը տերեւներ ալ թօթա-



Փելով ծառերէն կ'ըլլան պարարտութիւն եր-
կրի:



Լեղակենի:

Հարցմունք. — Բուսոց տերևները՝ իրենց
ի՞նչ բանի կը ծառայեն. — Կա՞ն բոյսեր ո-
րոց տերևներն ուտուին. — Կո՞ն բոյսեր ո-
րոց տերևները կենդանեաց կերակուր ըլ-

լան. — Թթվենիի և ծխախոտի տերևներն
ի՞նչ բանի կու գան. — Լեղակենիի և լրջա-
բուսոյ տերևներէն ի՞նչ կը հանեն. — Թէյի
տերևներն ի՞նչ բանի կը գործածուին. —
Կա՞ն տերևներ որք բժշկութեան մէջ գործ-
ածուին:



Լրջաբոյս:

20. — Ծաղիկներ եւ պտուղներ եւ անոնց գործ-
ածութիւնըն.

Ծաղիկները ամեն տեղ կը մշակուին իրենց
գեղեցիկ գոյներուն, անուշահոտութեան և

իբր զարդարանաց նիւթեր գործածուել-
նուն համար . անուշահոտ ծաղիկները կը
գործածուին արուեստից մէջ՝ հոտաշէու նիւ-
թեր պատրաստելու, ինչպէս մանոշակ, վարդ,
յասմիկ (jasmin), և այլն :



Ծուաղենի:

Այլք, կը գործածուին բժշկութեան մէջ
կամ իբր խաղոյ (tisane), այս ինքն իբր ըմ-
պելի, ինչպէս մողոլ, լորի (tilleul), մանոշ-

շակ. և կամ իբր սպեղանի, թրջելով կտաւի
կտոր մը, օրինակ իմն, փոնչուկի (arnica)
ծաղիկներուն երփնաջուրին (teinture) մէջ :



Սոկոյրաստակ:

Բայց ծաղիկներէ աւելի օգտակար՝ պտուղ-
ներն են, որք կ'ուտուին, որոցմնվ կը շինեն
անուշներ, կերակուրներ, ըմպելիներ, և այլն.
այսպէս են տանձ, ինձնոր, սերկնիլ, կեռաս,
ջիրան, ընկոյզ, նոշ, կաղին, եղակ, և այլն :

Շագանակը ոչ միայն իր պտուղ կ'ուտուի,
այլ միանգամայն մննդաբար է. ասոր ալիւրովը
հաց կը շինեն: Խաղողը կը ծառայէ զինիի
պատրաստութեան, և գինիէն քացախ կը



Սեփակնի:

Հանեն: Խնձորով կը պատրաստեն խնձորա-
ցոր (cidre), տանձէ՝ տանձանցոր (poiré). Եր-
կուքն ալ կը գործածուին իր զովացուցիչ
ըմպելիներ:

Հարցմունք. — Ի՞նչ են ծաղիկները և կը
գործածուի՞ն արուեստից մէջ. — Ծաղիկները
բժշկութեան մէջ գործածութիւն ունի՞ն. —

Պտուղները ի՞նչ բանի կու գան. — Շագա-
նակէ, խաղողէ, խնձորէ, տանձէ ի՞նչ բաներ
կը պատրաստուին:

21. — Ծխախոտ եւ Ալբոհ.

Ծխախոտն Սմերիկայէն եկած է յԵւրոպա
1560ին: Քրիստոֆոր Գոլոմակոս կը պատմէ



Ծխախոտի բոյոը, ծաղիկը և սերմը:

Թէ Սմերիկայի բնակիչները կը գործածէին
զայն առ հասարակ: Եւրոպացիք, և մանա-
ւանդ Սպանիացիք սկսան մշակել զասիկայ և
վաճառականութեան մեծ նիւթ ըրին:

Ծիսախոտ և ալքոհօլ երկու տեսակ զօրաւոր թղյներ են՝ երբ չափազանցութեան տարուին. մանաւանդ ալքոհոլ՝ որ առ հասարակ բռացվէ կ'ելլէ և անոնց ոգին է։ Մարդու արքեցողութեամբ ենթակայ կ'ըլլայ շատ տեսակ ծանր հիւանդութեանց։

Հարցմունք. — Ծիսախոտն ուսկից եկած է և որո՞նք մշակած են զայն. — Ալքոհոն ի՞նչ բանէ կ'ելլէ. — Ծիսախոտ և ալքոհօլ օգտականը են մարդու։

22. — Օդ.

Մենք օդով շրջապատուած ենք, որ երկրի չորս կողմը ստուար խաւ մը կը ձեւացունէ և մքնոյորտ կ'ըսուի։ Դատարկ սրահի մը մէջ, դատարկ շնի մը մէջ՝ միշտ կը գտնուի օդը. զայն պարպելու համար պէտք է մեքենայ մը, ինչպէս որ ջուրը բարձրացունելու կը դորժածեն ջրհան մեքենան։

Օդոյ մէջ կը թուշին թուշուններ և զայն կը չնչեն, ինչպէս որ ձկները ջրոյ մէջ կը լուղան. մենք ալ կը չնչենք օդը և գլխաւորաբար անով կ'ապրինք։ Մենեկի կամ սրահի մը մէջ օդը չենք տեսներ, վասն զի թափանցիկ է, կը թողու որ լոյսը մէջէն անցնի, և մենք անեկից կը տեսնենք մեր դիմացի առարկաներն՝ ինչպէս ապակւոյ մ'ետեսէն։

Մաքուր և ընտիր ապակին, մանաւանդ բիւրեղն, երբ վերածենք բարակ և թափան-

ցիկ թիթեղներու, գրեթէ անգոյն կ'երեխն. վասն զի ճերմակ թղթի մը վրայ գնելով, կը տեսնենք թուղթն իւր բնական գոյներովը. սակայն եթէ կողմնակի նայինք՝ կանաչագոյն կը տեսնենք. նոյնպէս է նաև ջուրն երբ մեծքանակութեամբ ըլլայ, թէ և զուտ և թափանցիկ է՝ բայց կանաչ կամ կապոյտ գոյն մը կ'ունենայ։

Այսպէս օդն ալ ամենաթեթէ կանաչ գոյն մ'ունի՛ երբ իւր զանդուածը դիտենք. այս պատճառաւ հորիզոնին մօտ գտնուող հեռաւոր առարկաներն և երկինքը՝ կապտագոյն կ'երեխն մեր աշաց։


Շնչելով օդը ոչ համ մը կ'առնունք և ոչ հօս. չենք կրնար ոչ բռնել և ոչ դպչել. բայց եթէ շունչ տանք ձեռքելուս և կամ եթէ հողմահարուինք, կը զգանք բան մը, հետեւաբար շօշափելիքն կ'իմացունէ մեղի օդոյ գոյութիւնը։

Օդը կրնայ ճնշուիլ և սովորականէն աւելի քիչ տեղ գրաւել. ինչպէս եթէ ունենանք ապակիէ խողովակ մը՝ մէկ ծայրը բաց միւսը դոյց, որոյ մէջ կարենայ մտնել ենել խցան մը՝ շօշափելով ապակւոյն եղերքներն, երբ միւնք խցանը խողովակին մէջ, կը ճնշուի օդն և աւելի քիչ տեղ կը գրաւէ. սակայն մինչեւ աստիճան մը, ուր երբ հասնի՝ գարձեալ խցանը գէպ 'ի վեր կը մղուի և մէջի օդը առաջուան պէս կ'ընդարձակի. ուրեմն օդը ձգտական մարմին մ'է որ կրնայ ձնչորիլ և ընդարձակիլ։

Օդը ամենաթեթէ մարմիններէն մին է՝ երբ բաղդատենք զինքը մի և նոյն տարածու-

յով ջրոյ կամ քարի հետ. բայց կան մարմիններ կամ կազեր՝ որոցմէ աւելի ծանր է, ինչպէս ջրեղէն գոլորշիէն :


իւր ծանրութիւնը փորձելու համար առնունք գաւաթ մը և լեցունենք ջրով մինչեւ բերանը, գոցենք զայն թղթով և դարձունենք վրան պնակ մը, յետոյ շրջենք գաւաթը պնակով հանդերձ. նոյն միջոց եթէ վերցունենք



Օրոյ ձետականութիւնն իմանալու փորձ :

պնակը, պիտի տեսնենք որ թուղթը պիտի մնայ ջրոյն երեսը, և շրջած գաւաթին ջուրը պիտի չի թափի. ուրեմն ըսել է թէ օդը թղթին վրայ կը ճնշէ և չի թողուր որ ջուրը թափի. հետեւաբար օդը ճանրութիւն մ'ունի:

Այս ըսելնէս վերջ գիւրաւ կրնանք ըմբըռնել օդաչափի (baromètre) գործոյն ինչ ըլլան, որ կը ծառայէ օդոյ ճնշումն իմանալու: կ'առնունք մէկ մեղք երկայնութեամբ խողովակ մը սնդիրով լեցուն, որ ծանր և հեղուկ



Օրոյ ճնշումն իմանալու փորձ :

մետաղ մ'է. կը դարձունենք խողովակը սընդկալից տաշտի մը մէջ. մնդկի մէկ մասն իւր բնական ծանրութեամբը տաշտին մէջ կը լեցուի, բայց միւս կողմանէ օդոյ ճնշումը վերբարձրացած կը բռնէ մնդկի մնացած սիւրարձրացած:


Նակը՝ որ 76 հարիւրորդամեղը բարձրութիւն ունի:

Օդը ցրտութեամբ կը խռանայ, իսկ ջերմութեամբ կ'ընդլայնի. եթէ ուզենք զայն փորձով ապացուցանել, կ'առնունք դատարկ շիշ մը և կը փակենք խցանով, կը գնենք արեւու դիմաց կամ կրակի քով, պիտի տեսնենք որ ջերմութեամբ մէջի օդը կ'ընդարձակի և խցանը վեր կը նետէ:

Տաքցած օդը պաղ օդէն աւելի թեթևէ. և երբ ծխանէ մը տաքցած օդը դուրս կ'ելէ, կը բարձրանայ պաղ օդի մէջ՝ մինչև որ ինքն ալ պաղի. արդ, համարինք թէ այս տաքցած օդը թղթի մը մէջ կարենանք ամիսփել ուսկից չկարենայ դուրս ելլել. պիտի տեսնենք այն տտեն որ օդոյ հետ միասին թուղթն ալ վեր պիտի բարձրանայ: Գիտնալով այս բանս Մոնկոլֆիէ անուամբ թղթագործ մը՝ ուզեց փորձն ընել. շինեց մեծ օդապարիկ մը՝ բաց թողլով վարի բերանն. գրաւ անոր դիմաց սպունգ մը՝ ալքոհի և ռետի մէջ թաթխուած և բուրնկցուց. տեսաւ որ օդապարկին մէջ գտնուած օդը տաքնալով սկսաւ ընդարձակիլ. մէկ մասը բերնէն դուրս ելաւ, մնացածը թիթեցաւ և թղթոյն հետ սկսաւ բարձրանալ օդոյ մէջ. հնարողին անուամբ Մոնկոլոֆեան օդապարիկներ ըստեցան ասոնք: Հիմակ գեռ աւելի մեծերը կը շինեն՝ որոցմով մարդիկ կը բարձրանան օդոյ մէջ. բայց փոխանակ օդով լեցունելու՝ աւելի թեթև կազով մը կը լեցունեն զանոնք:

Ուրեմն եթէ տաք օդը պաղ օդէն աւելի թեթևէ, հետեաբար սենեկի մը մէջ ուր կրակ

կը վառի, նոյն տեղւոյն օդը կը տաքնայ և կը թեթենայ. եթէ բանանք պատուհան մը՝ տաք օդոյն մէկ մասը դուրս կ'ելլէ և անոր




Օդապարիկ:

տեղ գրաւ պաղ օդը ներս կը մոնէ. իսկ եթէ սենեակը պաղ ըլլայ, պատուհանէն պիտի

սկսի տաք օդ ներս մտնել. ուրեմն ըսել է թէ
բարեխաղնութեան վոտովսութիւն մը՝ օդը
շարժման մէջ կը պահէ, և ասկից առաջ կու
գայ հովլը:

Հովն է, ինչպէս տեսանք անցեալ տարւոյ



Օդապարփկը թեթև կազով լեցունեն:

Առաջին Շրջանին մէջ, որ ջաղացները կը
դարձունէ, նաւերու և նաւեկներու առա-
գասաները կը մղէ: Հովը սաստիկ փշած ժա-
մանակ՝ կը ծուէ ծառերը, կը կոտրէ և նոյն
խոկ արմատներէն կը խլէ կը հանէ զանոնք:

Հարցմունք. — Օդն ամեն տեղ կը գըտ-
նուի, և մեր չորս կողմը շրջապատող օդը
ի՞նչ կ'ըսուի. — Օդը կը տեսնե՞նք. — Օդն
ինչո՞ւ կանաչ գոյն ունի. — Ի՞նչ միջոցով կ'ի-
մանանք օդոյ գոյութիւնը. — Օդը կրնայ
ճնշուիլ և ընդարձակիլ. — Օդը թեթև մար-
մին է. — Ի՞նչ փորձով կրնաս ապացուցա-
նել օդոյ ծանրութիւնը. — Ի՞նչ է օդաչափ
գործին. — Պաղ օդը ծանր է թէ տաք օ-
դը. — Ի՞նչ է օդապարփկն և ո՞վ հնարեց. —
Հովն ի՞նչ բանէ առաջ կու գայ. — Հովն օ-
դուտ և վնաս ունի:


23. — Զուր.

Զուրին երկրիո չորս մասին երեք մասը
ծածկած է:

Թողունք քիչ մը ջուր արևու գիմաց կամ
կրակի վրայ. պիտի տեսնենք քիչ ատենէն
որ բան չի մնար, անյայտացած՝ գոլորշի գար-
ձած է: Ցաք ջուրն իւր մէջ շաքար և աղ
աւելի կը լուծէ քանի պաղ ջուրը. և երբ չի
կարենայ ալ աւելի լուծել՝ յագեցած (saturée)
է կ'ըսենք. եթէ լուծելէն վերջ պաղի՝ իւր
մէջ լուծած շաքարին մէկ մասը կը հանգչի,
հասաւատուն մարմին կը գառնայ: Մի և նոյն
կերպով, տաք օդը պաղ օդէն աւելի ջրեղէն
գոլորշի կը լուծէ իւր մէջ:

Գուրը երբ գանդաղութեամբ գոլորշիանայ՝
իւր գոլորշին չերկիր. բայց երբ չերմութեամբ՝
երագենք գոլորշիացումը, մանաւանդ թողլով
որ գործողութիւնը պաղ օդոյ մէջ կատա-


րուի, այն ատեն յետինս չի կրնար շուտով
լուծել այդ գոլորշիներն իւր մէջ . հետեաբար
մէկ մասը հեղուկ կը դառնայ, և կ'ըսենք թէ
կը խտանայ: Զմեռ եղանակի մէջ երբ մեր
շնչառութեան միջոց գոլորշի կը տեսնենք,



Երկրագունդ:

ըսել է թէ ջրեղէն գոլորշին՝ որ բերաններ-
նէս տաք կ'ելլէ՝ պազ օդոյ դիմաց կը խտա-
նայ և հեղուկ կը դառնայ: Այս օրինակէս
դիւրաւ կրնանք հասկնալ թէ ի՞նչ է ցող, մա-
ռախուղ, ամպ և անձրև:

Օդոյ մէջ կը գտնուի զանազան քանակու-
թեամբ ջրեղէն գոլորշի . և երբ օդը տաքնայ՝
աւելի կը լուծէ, իսկ երբ պազի՝ չի կրնար
լուծել կամ ունեցածը իւր մէջ պահել. հե-
տեաբար հեղուկ ջրոյ վերածուելով՝ կ'իջնէ
երկրիս վրայ փոքրիկ կաթիլներու կերպա-
րանօք. և եթէ այս կաթիլներն իջած միջոց-



Թորեցուցիչ գործի:

Նին՝ նորէն չի գոլորշիանան՝ կ'ըլլան անձրև:՝
Մի և նոյն գործողութիւնը կը կատարուի
նաև բորեցորշիչ գործոյ (alambic) մէջ, որ
կաթսայ մ'է և մէջը կը գնեն ջուր կամ ո՛
և է հեղուկ մը, կը տաքցունեն զայն որուն
գոլորշիները ուրիշ անօթի մը մէջ կը խտա-
նան և կը հաւաքին: Թորեցուցիչ գործոյն

խուփին վրայ խողովակ մը կայ և անովլ կը հաղորդակցի պաղ ջրոյ մէջ ընկղմած ուրիշ խողովակի մը հետ. ջրոյ գոլորշին վերջնոյ մէջ կը խոտանայ:

Ջուրը պաղելովլ ուրիշ կերպարանք մ'ալ կ'առնու, այն է հաստատուն վիճակի փոխուիլն, որ ձիւն կամ առաջ կ'ըսուի: Ձիւնը և սառը գեղեցիկ բիւրեղներ են. ձեան բիւրեղները կը տեսնենք ձմեռ եղանակի մէջ. իսկ սառոյցը՝ նոյն եղանակին պատուհանաց վրայ անպակաս կ'ըլլայ:

Ջուրը կանոնաւոր ձեերովլ բիւրեղանսպուն պատճառաւաւ՝ սառոյցն աւելի տեղ կը բանէ և աւելի թեթև կ'ըլլայ:


Մ'ենք ձմեռ եղանակի մէջ միայն սառոյց կ'ունենանք, բայց բևեռները միշտ կը գըտնուի. այն կողմի ծովերուն մէջ սառոյցը բլուրներու պէս կը բարձրանայ, և գացող նաւերը՝ ամիսներով անոնց մէջ բանտարկուած կը մընան:

Երկրագունաժիս բարձր լերանց վրայ այն աստիճան ցուրտ կ'ըլլայ, որ ձեան զանգուածները տարուէ տարի կը բարձրանան, կը կարծրանան և սառնարաններ (glaciers) կը կազմեն. անոնք ամառ եղանակի մէջ մասամբ մը կը հալին, իրենց ջրերովն առուակներ կը ձեացունեն և կը սկսին լեռներէ փարիչներ. նոյն առուակները հաւաքուելով ձորերու մէջ՝ կը կազմեն փոքր և մեծ գետեր, որոց ջրերը գէպ ՚ի ծով երթարով՝ ճամբան հետզհետէ կը գոլորշիանան:

Ուրեմն ջուրը երեք վիճակ կ'ունենայ, մեղուկ, կազային և հաստատուն: Երկիրս խո-

շոր թորեցուցիչ գործւոյ մը կը նմանի: Ջրերը համբարուած են ծովերու մէջ, արեւու ջերմութեամբ կը գործիանան և կը բարձրանան օդոյ մէջ, գարձեալ խտանալով՝ կ'իջնեն երկրիս վրայ և կ'ըլլան մառախուշ, անձրես կամ ձիւն:


Ջուրը կը թափանցէ երկրիս խորերը,



Սառնարաններ:

Կ'անցնի առազներէ, քարերէ, մինչև որ կը հանդիպի կարգ մը խաւի կամ ապառաժի: Եթէ բանանք ջրհոր մը այն խաւերուն մէջ՝ ուր կարենայ թափանցել ջուրն, այդ ջրհորին մէջ պիտի հաւաքին ջրերը. եթէ բարձր տեղերէ հասնին այս ջրերը, պիտի սկսին գէպ ՚ի վեր ժայթքել. այս տեսակ ջրհորները կ'ըսուին արտօնեգեան ջրհորք՝ կազդից Արտուր գաւառէն, առաջին անգամ հոն բացուելուն պատճառաւ:

Ջուրը մարդուս և կենդանեաց սովորական
բնակելին է. ասով կ'եփեն կերակուրները, կը
լուան ճերմակեղէնները, կը մաքրուին՝ կը
որբուին, երկիրները կ'ոռոգեն, աղօրիներ
կը դարձունեն, և այլն: Նաւերը և շոդենաւ-



Արտեզեան ջրնոր:

ները վաճառականական բերքերով լեցուն՝
ջրերը կտրելով կ'երթան քաղքէ քաղաք,
մարդիկ կ'երթեենեն, և շատերն առողջու-
թեան համար ծովային ճանապարհորդու-
թիւններ կ'ընեն:

Հարցմունք. — Ջուրը երկրիս ո՞րչափ մա-
սը գրաւած է. — Ջուրը օդոյ մէջ կը լու-
ծուի. — Երբ օդոյ մէջ ջրեղէն գոլորշին
շատ գտնուի, անոր մէկ մասն ի՞նչ կ'ըլլայ. —
Ջրեղէն գոլորշին օդոյ մէջ ե՞րբ աւելի քա-
նակութեամբ կը լուծուի. — ի՞նչ է թորե-
ցուցիչ գործին. — ի՞նչ է սասը. — Ջուրը
սասելով շատ տեղ կը գրաւէ. — ի՞նչ են
սատնարաններն. — Ջուրը քանի՞ վիճակ
կ'ունենայ. — ի՞նչ են արտեզեան ջրհոր-
ներն. — Ջուրն ի՞նչ բանի կը գործածուի:

24. — Կըակ.

Դնենք ապակեայ զանդակի տակ վառած
ճրագ մը, պիտի տեսնենք որ ճրագին բոցը
երթալով պիտի տկարանայ, դեղնի, երկնայ
և ճերմակ մուխս մ'արձկելով պիտի մարի.
պատճառն է օդոյ պակասութիւնը. ինչպէս
եթէ ճրագին տեղ թոշուն կամ ուրիշ կեն-
դանի մը դնէնք նոյն ապակեայ զանդակին
տակ, կենդանին պիտի մեռնէր: Ըսել է թէ
ճրագն ալ վառ կենալու համար օդոյ պէտք
ունի:

Ճրագի մը բոցն այլ և այլ մասերէ կը բաղ-
կանայ. կեդրոնը մնութ է, և եթէ այնտեղ մօ-
տեցնել կարենանք վառողը՝ չի բռնկիր, վասն
զի օդը չի մօտենար բոցին կեդրոնը:


Եթէ վառենք ածուխի կտոր մը, պիտի
տեսնենք որ կամաց կամաց կը սպառի. կիզ-
ման միջոց կը ծնանի ջերմութիւն, և եթէ
կիզումը երագ է՝ առաջ կը բերէ նաև լցո-
ւեթէ այս վառած ածուխը գնենք ապակեայ
զանդակին տակ, ճրագին նման կը մարի.
Ըսել է թէ վառելուն պատճառը օդոյ միանալն
է կիզանելի նիւթոյն հետ, որ կը բռնկցնէ
զայն՝ առաջ բերելով ջերմութիւն և լցոյ: Կի-
զանելի կ'ըսուին այն ամեն մարմիններն որ
օդոյ գիմաց կրնան այրիլ, ինչպէս փայտ,
անոշի, ձրագ, քարիշղ, և այլն:

Մարմիններն այրելով սովորաբար մոխիր
կը թողուն. բայց կան մարմիններ ալ որք
այրելով մոխիր չեն թողուր, այլ լցոյ մը կու-
տան, ինչպէս մում, իշղ, քարիշղ. պատճառն

է, վասն զի ասոնք այրելով կ'ըլլան կազ և
կը խառնուին մջնողորտի օդոյն հետ :

Կրակը մեզի շատ օդտակար է. առանց
կրակի պիտի չկարենայինք եփել կերակուր-
ները, և ձմեռ ատեն ցրտէն պիտի սառէինք,


Կրակը բնութեան մէջ զանազան կերպա-
րանօք կը գտնուի. գլխաւոր աղբիւրներն են
հրարուխներն և արևը : Հրարուխ կ'ըսուին
այն լեռներն, որք երբեմն երբեմն կ'արձըկեն




Հրարուխ :

բոց, գոլորշի, ծուխ, մոխիր և քար : իսկ
արեւ հնոց մ'է ջերմութեան, որուն տաքու-
թիւնը կրնայ գործածուիլ կեդրոնացնելով
զայն ոսպնաձեի (lentille) կամ հայելոյ մը
մէջ . և այս կերպով կրնայ բուժնկցունել ու-
րիշ նիւթեր ալ և կամ կերակուրներ եփել :

Կը տեսնենք արդէն թէ ի՞նչ մեծամեծ ծա-
ռայութիւններ կ'ընեն մարդուս այլ և այլ տե-
սակ շոդեշարժ մեքենաներն առանց կրակի ոչ
շոդենաւք կը քալեն, ոչ շոդեկառք, և ոչ ալ
խոհանոցներու մեքենաներն կրնան գործ-
ածուիլ :



Հարցմունք. — Ի՞նչ պատճառաւ զանգակի
մը տակ ճրագն և ածուխը կը մարին. — Ճրա-



գի մը լոյսը մէկ մասէ միայն կը բաղկա-
նայ. — Ո՞ր մարմինները կիշանելի կ'ըսուխն. —

Ամեն մարմիններ այրելով օդոյ գիմաց՝ մոխիր
կը թողնէն. — Կրակը մեզի ի՞նչ օդուտներ
ունի. — Ի՞նչ է հրաբուխը և ի՞նչ է արեն. —
Շողեշարժ մեքենաներն ինչո՞վ կը շարժին:


25. — Մթնոլորտային երեւոյթներ.

Հսկի ձեզ առաջուց թէ ի՞նչ պատճառէ ա-
ռաջ կու գայ հովլի: Երկրագունդիս վրայ հա-
սարակածին կողմը տաք է և բեեռները ցուրտ
են. ըսել է թէ մէկ կողմի օդը տաք է, միւս
կողմինը պաղ. այս է ահաւասիկ հովերուն
պատճառը: Ասկից զատ իւրաքանչիւր եր-
կիրներու մէջ օդն ըստ եղանակաց կը տաք-
նայ և կը պաղի, ցերեկները և գիշերները
օդոյ բարեխառնութիւնը կը փոփոխի. ասոնք
ամենն ալ պատճառ կ'ըլլան հովեր առաջ բե-
րելու. և որչափ որ օդը զգալի կերպով տաք-
նայ կամ պաղի, այնչափ ալ հովը աւելի ու-
ժով կ'ըլլայ:

Հովլի մարդուս օդուտներ ունի, անով կը
դարձունեն ջաղացները, ծովու և գետերու
մէջ առագաստներով կը ճանապարհորդեն.
բայց վնասներ ալ ունի, վասն զի սաստիկ
փշած ժամանակ ցորենը կը պառկեցնէ, պը-
տուզները կը թափէ, և գեռ աւելի սաստիկ
եղած միջոց՝ կը խորտակէ ծառերը, տունե-
րու ծածքը կը տանիք որ վորորիկ (tempête)
կ'ըսուի. իսկ մրրկի ժամանակ կը մղէ մար-
դեկը և կենդանիները, թնդանօթները և շո-
գեկառաց կառախումբերը տեղէ տեղ կը փո-
խադրէ, և կը խորտակէ նոյն իսկ հաստա-

տուն ամերու պատերը . հուսկ յետոյ թարառ
(trombe) կը ձևացնէ՝ որ իւր իշնելովն ամեն
բան կը կործանէ :

Հովին ո՞ր կողմէն փշեն իմանալու համար ,
գործի մը հնարած են որ կ'ըսուի հողմացոյց
(girouette) , և կը բազկանայ մետաղեայ թի-
թեղէ մը . այս գործին ո՞ր կողմը որ դասնայ՝




Փոթորիկ :

կ'իմացնէ թէ հովն ալ նոյն գիրքով կը փշէ :
Անձրել կը ձևանայ օդոյ մէջ բովանդա-
կուած ջրեղէն գոլորշիներէն , որք երբ կը
բարձրանան միժնոլորտի մէջ և ցրտութեան
կը հանդիպին՝ կը խասնան և ամպ կը ձե-
ւանան . երբ արագ և առատ է այս խասացու-
մը , կաթիլները կ'իշնեն երկրիս վրայ և կ'ը-
լան անձրել :

Ջրեղէն գոլորշին երբ երկրիս վրայ խասա-
նայ՝ կ'ըլլայ մառախուղ , որ ամպի պէս կը
ծածանի : Ցողն ալ նոյնպէս խասացած ջրեղէն


գոլորշի է , որ կաթիլ կաթիլ կը հանդչի
պաղ մարմուց վրայ , ինչպէս տերեներու .
քարերու , և այլն : Իսկ եթէ ջրեղէն գոլոր-
շին միժնոլորտի բարձր խաւերուն մէջ խաս-
նայ , ուր շատ ցուրտ է , կ'ըլլայ ձիւն : Գա-
լով կարկուտի՝ խանութերդ մ'է ձեան և սա-
սած անձրեի , ո՞ր երբեմն փոքր հատերէ կը
ձևանայ և երբեմն մեծ :



Թաթառ :

Ծիրանի գոտին կը տեսնուի երկնից երե-
սը՝ անձրե եկած միջոց տեղոյ մը վրայ ,
մինչդեռ անկից հեռուն արել կը ճառագայ-
թէ : Անձրեի իւրաքանչիւր կաթիլները կ'ան-
դրագարձունեն արևու լոյսը . և որովհետեւ
ամենքն ալ կըրածեն են , կը բաժնեն ասոր

լոյսը եօթը գոյներու. այս գոյներն են կարմիր, նարնջագոյն, դեղին, կանաչ, կապոյտ, լեղակ և մանուշակ: Դիտելու համար այս գեղեցիկ տեսարանը՝ պէտք է գտնուիլ ընդմէջ արեւ և ջրոյ կաթիներուն. ինչպէս փորձով ալ կրնանք տեսնել ջրվէժներու ստորոտը, ուր ինկած կաթիներն կամ ցայտած




Ամպ:

ջրոյն գոլորշւայ նման փոշիները՝ կը ձևացունեն ծիրանի գօտի մը:


Մրրիկ կ'ըսուի՝ երբ կ'անձրենէ, կ'որոտայ, կը փայլատակէ, և միւս կողմանէ հովը զօրաւոր կերպով կը փչէ. մըրկէ վախնալու բանչի կայ, բայց կայծակն է որ զմարդ կը վախցունէ: Դիւրին կերպով մը բացատրեմ թէ ինչպէս կը ձևանայ կայծակն:

Եթէ չուխայի մը կտորով շփենք կնքամոմէ կամ ապակեայ գաւազան մը, և տաքցած մի-



Օլրանի գոտին:


ջոց մօտեցնենք քովը մազի և թղթի կտորներ, գաւազանը զասոնք իրեն կը ձգէ. ըսել



Ապակեայ գաւազանին փորձը:

է թէ կնքամոմէ գտւաղանն ոյժ մը ստացած
է. եթէ շատ ոյժ ստանայ՝ կ'արձակէ կայծ
և փոքրիկ շառաչ մը։ Արդ ասիկայ փոքր
կայծակ մ'է. մի և նոյն ոյժն ամպերու մէջ
ալ կը ձևանայ և կ'ըլլայ կայծակ։

Մարդիկ հասկնալով կայծակին ի՞նչ ըլլալն՝




Լոյծակ։

միջոց մ'ալ հնարեցին զայն արգիլելու. այն
է շանթարգելն, զոր գտառ ֆրանքլին Ամերի-
կացին։ Ասիկայ կը բազկանայ մետաղեայ եր-
կայն ցողէ՝ ուսկից կը մեկնի երկաթեայ թել
մը, որ կ'իջնէ խոնաւ երկրի կամ ջրհորի
մը մէջ։ Երբ կայծակն ամպերէն ուղղակի
տան մը վրայ իջնէ, շանթարգելը կը ձգէ

զայն առ ինքն, և երկաթեայ թելին վրայէն
սահեցնելով կը տանի կ'անհետացնէ եր-
կրիս խորը։


Մարդիկ օդոյ ճնշումն և իւր
փոփոխութիւնները խմանալու հա-
մար, հնարեցին օդաչափի։ Ջրե-
ղէն գոլորշին օդէ աւելի թեթե-
է, հետեւրար խոնաւ օդն աւելի
թեթե է քան չոր օդը։ Ուրեմն
երբ օդը խոնաւ է, թեթե կեր-
պով կը ճնշէ օդաչափի սնդկին
վրայ, և բնական է որ սնդկի
սիւնակն ալ կը սկսի իջնել. իսկ
երբ օդը չոր է, սիւնակը կը բար-
ձրանայ։ Գիտենք որ անձրելը կը
ձևանայ ջրոյ գոլորշիներու խտա-
նալէն. որչափ որ օդը խոնաւ ըլ-
լայ, այնչափ ալ հաւանական է թէ
անձրել։ Հետեւրար երբ օդա-
չափը ցածնայ՝ կը գուշակենք թէ
օդը պիտի աւրուի։ Կան այնպիսի
կերպով շինուած օդաչափեր ալ,
որոց մէջ սնդկի շարժումը հա-
զորդակցութիւն ունի ասեղի մը
հետ՝ որ ցուցակի վրայ կը դառ-
նայ, ուր նշանակուած են փոփո-
խական, անձրել, գեղեցիկ օդ, և
այլն, բառերը. և ասոնք կ'ըսուին
ցուցակաշոր օդաչափեր՝ (baromètre à cadran):



Օդաչափ։

Հարցմունք. — Հովը ի՞նչ բանէ առաջ կու-
գայ. — Հովի ունի՞ օդուտներ և վասներ. —

ի՞նչ է հողմացոյց դործին. — ի՞նչ են անձրե, մառախուղ, ցոլ, ձիւն և կարկուտ. — ի՞նչ է ծիրանի գօտին և քանի՞ գոյներէ կը բաղկանայ. — ի՞նչ է մըրիկն և կայծակը. — կայծակն արգելելու համար ի՞նչ դործիք հնարուած է. — Օդաշափ ըսուածն ի՞նչ տեսակ դործի է. — Ո՞րն է ցուցակաւոր օդաշափն :



Ցուցակաւոր օդաշափ :

26. — Մարմնամարզ.

Երբ մարդս մարմնոյն մէկ մասին մկունքը (muscles) շատ դործածէ՝ կը ստուգարանայ այն, կ'ուժովնայ և կը զօրանայ. այս պատճառաւ հայցագործները, գարբինները և նաւակներու թիավարներն ստուար բազուկներ կ'ունենան, վասն զի ուժով կը շազուեն աշխերը, ծանը մուրճերով կը ծեծեն երկաթը սալի վրայ, և ուժով թի կը քաշեն ծովու վրայ, և այս արուեստները կը ստուարացնեն և կ'ուժովցունեն իրենց բազկաց մկունքը։ Այսպէս նաև շատ քարոզ և երթևեկող մարդեկը ստուար սրունք կ'ունենան։

Տղայ մը շուտ կը զգայ շարժման օգտակարութիւնը, վասն զի գասարանի մէջ լաւ աշխատելէ եաք, իրեն ախորժելի կու գայ ցատկել և վազելը. այս շարժմոնքը կը կենդանացնէ իւր ջղերը։ Մարդ մը որ սենե կին մէջ անշարժ կը նստի և կ'աշխատի, չի կրնար ուժով ըլլալ, պէտք է շարժմունք ընել։

Բայց մկունքներու լաւ շարժմունք և ոյժ տալու համար, մէկ հատիկ միջոցն է մարմնամարզը (gymnastique). վասն զի անով մարդ այնպիսի կրթութիւններ կ'ընէ, որով մարմնոյն ամեն մկունքը կը զօրանան։ Եթէ տղայ մը եռանդեամբ և ոգւով ընէ այդ կը թութիւնները՝ և ոչ թէ թոյլ կերպով, ինչպէս առ հասարակ սովորութիւն է տղայոց, այն ատեն ոչ միայն տղան բազուկներն և սըրունքները կ'ուժովնան, այլ ամբողջ մարմինը.

անով յարմար կ'ըլլայ ամեն արուեստի, և
շատ անդամ կենաց վտանգէ ալ կ'ազատէ
ինք զինքը՝ երբ մարմնամարզով ուժովսայ և
թեթևնայ:

Զղերն երբեմն կծկելով սաստիկ կը ցաւին՝
որ գեղունն (cramp) կ'ըսուի, և սովորաբար
պալով, տաքով կամ շիմամբ կ'անցնի: Յաշը
կամ յօդացառորդինը (rhumatism) մասամբ
ջղերու մէջն է, և սովորաբար ծերերու կը
պատահի. սակայն յանցանքն իրենց է, վա-
սըն զի երիտասարգութեան ժամանակ ուշ
չեն դրած խոնաւ տեղեր չպառկելու, զգեստ-
նին թաց չպահելու, և այլն, այս պատ-
ճառներով յօդացաւութիւններ ստացած են:
Այսու հանդերձ ստոյդ ալ է որ ազքատնե-
րուն կը պակսին կարեսը միջոցներն, որպէս
զի կարենան դարմանել իրենք զիրենք:

Հարցմունք. — Ի՞նչ պատճառաւ դարձին-
ները կամ նաւափարները ուժով բազուկներ
կ'ունենան. — Շարժմունքը մարդուս օգտա-
կար է. — Ի՞նչ է մարմնամարզն և ի՞նչ օ-
գուտ ունի. — Ի՞նչ է գելումն և յօդացա-
ւութիւնը և ի՞նչ պատճառներէ առաջ կու-
գան:

27. — Թուղթ.

Գիրը Եղիպատացւոց զիւտն է, ուսկից բնա-
կանաբար կը հետևի թէ կը մինտուէին այն-
պիսի մարմին մ'ալ որոյ վրայ կարելի ըլլար
գրելը:

Նեղոսի ճախճախուտ եղերաց վրայ առա-
տութեամբ կը գտնուի եղեղի նման աճող բոյս
մը. ասոր վրայի կեղեր հանելով կը հան-
դիպինք նեարդային ուրիշ կակուղ կեղեկի
մը, որ խաւ խաւ է և գիւրութեամբ ալ կը
բախնուի: Կը կտրեն այս կեղեր, կը չորցու-
նեն, մամնալի տակ կը դնեն, և կը վերածեն
նուրբ՝ թեթե և ծերմակ թերթերու, և վրան
կը գրեն: Գտան զասիկայ Եղիպատացիք և ա-
նունը գրին սրապիր կամ պրտու (papyrus):


Ժամանակ անցնելով ասոր փոխանակեց մա-
գաղաքն, որ ոչխարաց կամ ուրիշ կենդա-
նեաց մորթն է՝ յղիուած և մաքրուած. մեր
հին գրքերն ասոր վրայ գրուած են, և նոյն
իսկ թուղթը հնարուելէ վերջն ալ դեռ կը
գործածէին զասիկայ՝ դաշնագրեր արձանա-
գրելու համար, և նոյն իսկ մինչև հիմայ կը
գործածեն գեռ, երբ կ'ուզեն արձանագրու-
թիւն մը մշտառե պահել:

Թուղթը հնարեցին Զինացիք և Ճարտնա-
ցիք: Կը պատրաստէին զայն հնդկեղէզի (bam-
boo) նեարդերով, բբենիի և ուրիշ բուսոց
կեղևներով, զորոնք կը վերածէին մանր և
նուրբ թեթերու, կը ծեծէին և ջրոյ մէջ կը
լուծէին՝ մինչև որ զանգուած մ'ըլլար. յե-
տոյ տարածելով և չորցունելով կ'ունենային
տեսակ մը հիւսուած:

Եւրոպա գողցաւ Զինացւոցմէ այս արուես-
տը, և կամաց կամաց հնարեց սովորական
թուղթը:

Ներկայապէս թուղթ պատրաստէրու համար
կը ժողվեն ցնցոտիները և կը խառնեն ջրով՝
կրով և նատրով, և ամբողջը կը լեցունեն

տեսակ մը երկարեայ տակառի մէջ, որ կը դառնայ մեքենայի մը առանցքին վրայ : Կը ապքունեն այս երկաթեայ տակառը ջլրեղեն գոլորշով, կը մաքրուին և կը կալզնան ցնցոտիին. կ'առնուն այն ատեն ասկից մաս մը և կը լեցունեն գործիքի մը մէջ որ երագութեամբ կը գառնայ, ուր կը բարքտին, թելերու կը վերածուին և կ'ըլլան զանգուած մը : Կը ճերմկցունեն այս զանգուածը քլորով, կը լուան ջրով և կը լեցունեն տաշտի մը մէջ :



Յովիսոյ պատրաստութիւն :

Զանգուածն այսպէս պատրաստելէ վերջ, աշխատաւորը կ'առնու իւր ձեռքը մեծ մաղ մը, կ'ընկղմէ տաշտին մէջ՝ կ'առնու զանգուածէն, կը ցնցէ, որպէս զի ամեն կողմը հաւասար կերպով տարածուի, և երագութեամբ կը դարձուն, ճերմակ թաղիին վրայ, կը ծածկէ վրան ուրիշ թաղի մը, և

հետզետէ կը շարունակէ գործողութիւնը՝ մինչև որ բաւտիկան բարձրանայ : Յետոյ կը դնէ ամբողջութիւնը մնամուլներու տակ, կը ճնշէ զասոնք, կը վազցնէ ջուրը և կ'ըլլաց բուղը :

Մակայն ասոր վրայ գեռ չի գրուիր, վասն զի ծծուն է. պէտք է ընկղմել զայն դրնդողով (gélatine) շինուած սոսնձի մէջ, որպէս զի ծակտիկները գոցուին և թանաքը մէջը չի թափանցէ :

Հարցմունք. — Գիրը որո՞նց գիւտն է . — ի՞նչ է պապիր կամ՝ պրառ ըսուածը և ի՞նչ բանի կը ծառայէ . — ի՞նչ է մագաղաթն և ի՞նչ բանի կու գայ . — Որո՞նք հնարեցին թուղթը և ի՞նչպէս կը շինէին . — Հիմայ ի՞նչպէս կը պատրաստեն թուղթը :

28. — Գիրք .

Գիրը մարդուս փոքրիկ ընկերն և բարեկամն է, և անով ինքն իրեն կրնայ շատ մը բաներ սորուիլ : Ատենօք գիրը մը թանկագին էր, և յատուկ օրինակիշներ կային որ մագաղաթներու վրայ կը գրէին . կը փորագրէին նաև փայտերու վրայ պատկերներ և կը ծախէին :

Ատածեց կութթեմպերկ որ պատկերներու տեղ գրերը փորագրէ տախտակներու վրայ, կամ թէ ըսեմ, գրութեան մամբողջ բառերը և տպագրէ : Այս ոճով հրատարա-

կեց նախ իւր Համառօս քերականորիւնը դպրոցաց համար : Սակայն տեսաւ որ անտանելի աշխատութիւն մ'էր . սկսաւ մտածել գիւրագոյն միջոց մը , և հնարեց շարժուն գրերը . շինեց նախ ասոնց կաղապարները , և մետաղով թափել տուաւ գրերը . յետոյ շարել տալով հնարեց տպագրութեան արուեստը :




Կոթթեմուերկ հնարիւ տպագրութեան :

Գրերը կ'ըսուին նշանագիր (type) . այն տեղը՝ յորում կը շարեն զանոնք՝ կ'ըսուի տպարան (typographie) , և շարող արուեստաորը կ'ըսուի գրադար (typographe) :

Գրերուն զանգուածը կը պատրաստեն երկու մետաղներու խառնրգով , այն է ծարիք (antimoine) և կապար : Այս նշանագրերն եթէ շատ գործածուելով մաշին , նորէն կը հալեցունն զանոնք և կրկին անգամ կը թափեն :

Գրաշարին գիմաց կայ արկդ մը խորշ խորդ բաժնուած . իւրաքանչիւր խորշին մէջ առան-




Գրաշարք և իրենց արկդներն :

Ճին առանձին գրեր կան . ձեռքն ունի գրաշարի քանոն (compositeur) մը՝ որոյ վրայ բառերը կարգաւ կը շարէ և իւրաքանչիւր բառին մէջ կը դնէ անգիր մետաղի կտոր մը , որպէս զի բառերն իրարու հետ չի միանան . այսպէս կը շարէ չորս հինգ տող՝ և կը փոխադրէ տախտակի մը վրայ , մինչև որ երես մ'ամբողջանայ . լմնալէ վերջ կը կապէ և կը յանձնէ տպագրելին :

Տպագրիչը գլանով մը վրան թանաք կուտայ, կը դնէ մամուլի տակ և կը տպէ թղթի մը վրայ, յետոյ ուրիշ թղթի մը, և այսպէս յաջորդաբար հազարաւոր օրինակներ կը հանէ:

Եթէ ուզեն տպագրութիւնը շուտով լմնացնել և քիչ ժամանակի մէջ բազմաթիւ օրինակներ հանել, կան շոգիով շարժող տպագրիչ մեքենաներ, որոց ճերմակ թուզի միայն




Մեքենական մամուլ:

կու տայ արուեստաւորն՝ և միւս կողմանէ տըպուած կ'առնու զայն:

Տպագրութեան թանաքը կը շինեն կտաշատի իշղով, քարմարցանկով (litharge), և մուրով (noir de fumée):

Գրքի մը բոլոր թերթերը պատրաստելէն վերջը, կը ծալլեն զանոնք և կը կարեն. կը կորցունեն գրքին կանակը, սոսինձ կը քսեն և կ'ամրացունեն. յետոյ կ'անցունեն վրան կողք մը:



Մուր պատրաստելու կերպ:

Հարցմունք. — Հին ատեն գրքի մ'օրինակն ի՞նչպէս կ'ունենային. — Ո՞վ դուռ արագածան և ի՞նչպէս սկսաւ. — Ի՞նչ կը հասկնաս նշանագիր, տպարան և գրաշար ըսելով. — Տպագրութեան գրերը ի՞նչ մետաղներով կը շինեն. — Գրաշարն ի՞նչպէս կը շարէ գիրք մը. — Շարելէն վերջ որո՞ւ կը յանձնէ. — Տպագրիչը ի՞նչպէս կը տպէ շարուած սիները. — Տպագրութեան թանաքը ի՞նչ նիւթերով կը պատրաստեն. — Ի՞նչպէս կը կազմեն գիրք մը:

29. — Նկար.

Զանազան երկիրներու բնակիչները կը խօսին այլ և այլ լեզուներ. Կրնանք լեզու մը չի հասկնալ, բայց կը ջանանք ձեւերով մոգերնիս բացատրել, ինչպէս ուտել, քնանալ, զարնել, քալել, և այլն: Բայց եթէ ուզենք, օրինակ իմն, գաղափար մը տալ շոգեւաւի, պէտք է նկարել հարիւրաւոր լեզուով հասկցնելչիրցածնիս՝ նկարով մը կը բացատրենք. Այս պատճառաւ նկարը հասարակաց լեզու ըսուած է. գարձեալ այս պատճառաւ է որ դասագրիերը պատկերազարդ կը հրատարակեն, վասն զի տղան բացատրութեամբ այնչափ լաւ չի հասկընար, որչափ նկարը տեսնելով:

Ուրեմն նկարը կը ներկայացունէ մեզ իրի մը պատկերը. այսպէս նկարներ են փորագրութիւն, վիմագրութիւն (lithographie), գունաւոր վիմագրութիւն (chromo-lithographie): Սակայն կայ տարբերութիւն մը նկարի

(image) և ծրագրի (dessin) մէջ. Ակարը տպագրութեամբ կրնայ շատ օրինակներ ըլլալ. բայց ծրագրի կամ իշղաներկ կամ պատկեր, մէկ հատ է միայն՝ ձեռօք շինուած:

Փորագրութիւնը կ'ըլլայ կարծր փայտի կամ մետաղի մը վրայ, յատոկ գործիներով, և կը պահանջուի որ արուեստաւորը դիմնայ նախ նկարչութեան արուեստն, ապա լաւ տեղեակ ըլլայ փորագրութեան: Պղնձի վրայ աշխատողք՝ կը գործածեն նաև բրուռուններ (acides):

Վիմագրութիւնը կ'ըլլայ քարէ տախտակներու վրայ, որք վիմագրական քարեր (pierrres lithographiques) կ'ըսուին և մարմարինի տեսակ մ'են: Արուեստաւորը երբ թղթի վրայ՝ այնպէս կը նկարէ այս քարին վրայ ծրագրը ընկ մը՝ որ կը բազկանայ մուռէ, ձարպէ, օձառէ և մուրէ: Նկարը լմնալէ վերջ, կը լեցունէ քարին վրայ հեղուկ մը, որ նկարուած մասերն առանց վնասելու, կ'ուտէ քարին միւս մասերը: Գործողութիւնը լմնալէ վերջ կը լուան քարը բեկնի խկուրեամք (essence de térebenthine), և գրսէն նշան մը չերեկի. բայց երբ տպագրիչը տպարանի թանաքին գլանովը քարին վրայէն անցնի և զնէ մամուլի տակ, ծրագրչով նկարուած պատկերը կ'ելլէ թղթին վրայ:

Իսկ գունաւոր վիմագրութիւնը նոր հնարուած արուեստ մ'է, և ասով գոյնզգոյն պատկերներն և նկարները ձշդիւ կ'արտասապեն. սակայն այնչափ քարերու վրայ առանձին առանձին նկարելու է նոյն պատկերն, որչափ որ պատկերին մէջ գոյներ կան. իւրաքանչիւր

քարին վրայ գտնուող նկարը՝ կը ծառայէ
մէկ տեսակ միայն գոյն տպելու. հետեւաբար
այն թուղթը որուն վրայ պատկերը պիտի
տպագրուի, մասմուլին տակէն այնշափ անդամ
պիտի անցնի, որչափ որ են պատկերին գոյ-
ները, կամ որ նոյն է, վիմագրական քարե-
րու թիւն, ուշ գնելով որ ամեն գոյն ճիշդ իւր
տեղը գրաւէ:

Հարցմունք. — ի՞նչու համար նկարը հա-
սարակաց լեզու ըսուած է. — ի՞նչ պատճա-
ռաւ գասագրերը պատկերազարդ կը հրա-
տարակեն. — Քանի տեսակ նկար կայ. —
ի՞նչ տարբերութիւն կայ նկարի և ծրագրի
կամ խղաներկի մէջ. — ի՞նչ է փորագրու-
թիւնը և ի՞նչպէս կ'ըլլայ. — ի՞նչ է վիմա-
գրութիւնը և ի՞նչպէս կ'ընեն. — ի՞նչ է գու-
նաւոր վիմագրութիւնը և ի՞նչու այլ և այլ
քարերու վրայ նոյն պատկերը կը նկարեն:

30. — Գրատուն եւ թամնգարան.

Գրեթէ ամեն քաղաքաց և դպրոցներու
մէջ կայ գրատուն մը, այն է դարաններ որոնց
մէջ կը պահուին գրքեր:

Մասնաւոր շինուած են գրատունները քա-
ղաքներու մէջ, որպէս զի ամեն աստիճանի
մարդիկ հոն գտնուած գրքերով կարենան
օգտուիլ. վասն զի շատ սուակ կ'աժեն, և
կան մեծ գրքեր որ շատ սուզ են և զանոնք
ամեն մարդ առ հասարակ չի կրնար գնել,

չունենալով ձեռքը միջոցներ: Ուրեմն, երբ
քաղաքին մէջ գտնուի գրատուն մը, ուսում-
նասէրք կընան երթալ հոն և ուզած գրքեր-
նին կարգալ և օգտուիլ. հետեւաբար հասա-
րակաց բարւոյն համար հաստատուած են ա-
սոնք: Իսկ դպրոցներու գրատունները կը ծա-
ռայեն դպրոցի մէջ գտնուող անձանց և աշա-
կերտաց:

Ինչպէս գրատուն՝ նոյնպէս նաև թանգա-
րան կը գտնուի առ հասարակ ամեն քաղա-
քաց և ամեն դպրոցներու մէջ: Թանգարա-
նի մէջ կը պահուին արուեստի նշանաւոր գոր-
ծերն, օրինակ իմն, հին աշտանակ մը, բա-
նուած մը, արձան մը, և այլն, բնական գի-
տութեանց գործիններ, կենդանիններ, տեսակ
տեսակ հին և նոր նկարներ կամ խղաներկ
պատկերներ, և այլն:

Քաղաքի մը հնութիւններն և հարստու-
թիւնքն մեծաւ մասամբ իւր թանգարանին
մէջն են և նոյն տեղույն յառաջադիմութիւ-
նը, ճաշակը, ջանքն և եռանդն անկից կը
չափուի:

Հարցմունք. — ի՞նչ է գրատունը և ի՞նչ
նպատակաւ հաստատած են զայն մարդիկ. —
ի՞նչ է թանգարանը և ի՞նչ կը գտնուի անոր
մէջ:


31. — Բարեգործական հաստատութիւններ.

Աշխարհիս վրայ դամնուող ամեն մարդիկ հաւասարապէս երջանիկ չեն. կան աղքատներ, հիշանդներ, ծերեր, որդեր, պակասառուներ, երեսէ ձգուածներ, և այլն։ Հին ատեն ասոնք անտէր կը մնային իրենք իրենց. սակայն քրիստոնէութեան քաղաքականութեան զարդանալովը հաստատուեցան հիշանդանոցներ, առաջ արեւելքի մէջ՝ ի կ. Պօլիս, և ապա յիտալիա և 'ի Յունաստան, և յետոյ կամաց կամաց աշխարհիս բոլոր քաղաքաց և գրեթէ անթիւ գիւղերուն մէջ։

Հիշանդանոցները մեծամեծ բնակարաններ կամ ընդարձակ պալատներ են, հովահար, գեղեցիկ գիւղերով շինուած, որոց մէջ կան յատուկ հիշանդապահներ՝ գարմանելու հիւանդները, բժիշկներ՝ հոգալու զանոնք, ծառներ, և այլն։ Հիւանդ մը որ անտէր մնացեր է և միջոց չոնի ինքզինքը հոգալու, կը փոխարեն այդ տեղը, կը հոգան զինքը, կը խնամեն մինչև որ առողջանայ, և յետոյ ազատ կը թողուն։

Այս հիւանդանոցները այնքան կարգաւորեալ շինուած և խնամքով նայուած են, որ մարդ գրեթէ իւր տանը մէջ հիւանդութեան ժամանակ այնքան հանդիսաւ և լաւ չի կրնար նայուիլ և խնամուիլ. այդ պատճառաւ կարգութիւն ունեցող մարդիկ ևս, իրենց հիւանդութեանը ժամանակ, շատ անգամ կը վերադասեն յատուկ վճարմամբ երթալ հոն և խնամուիլ։

Ծերանցները՝ ծերերու համար շինուած կամ հաստատուած են, այն ծերերուն՝ որք տէր մը չունին և իրենց կենաց վերջին օրերը



Հիւանդանոցներ

գժբաղդութեամբ պիտի անցունեն։ Զատոնք կը ժողվեն, կը առնին այդ բնակարանաց մէջ, ուր ամենքը մի և նոյն կանոնաց տակ

կ'ապրին, և անվլրդով առանց մոտահոգութեան իրենց կեանքը կ'անցունեն :


Այսպէս առանձին առանձին արանց և կանանց, ամեն տարիին, ամեն հասակի, ամեն տեսակ հիւանդութեանց համար կան յատուկ բարեգործական հաստատութիւններ, ինչպէս որք մնացած տղայոց, խոշ և մոշնչերու, խենքերու, և այլն. և ասոնք ամենքն ալ հարուստներու և բարերարներու տուած դրամով շինուած են, տէրութեանց ձեռքով, թագաւորներու և կայսերաց հրամանով և օգնութեամբ, մի միայն ժողովրդեան բարոյն և երջանկութեան համար :

Հարցմունք . — Հիւանդանոցները երբ սկսան հաստատուիլ քաղաքներու մէջ, և նախ ուր սկսու : — Ի՞նչ տեսակ տեղեր են հիւանդանոցներն և ի՞նչ բանի համար շինուած են. — Հիւանդանոցներու մէջ լաւ կը հոգացուի՞ն հիւանդները. — Ի՞նչ է ծերանոցը. — Կան գեռուրիշ տեսակ բարեգործական հաստատութիւններ, ի՞նչպէս շինուած են, և որո՞ց ձեռնատուութեամբ :


32. — Ծառուղիք եւ Հասարակաց նրապարակներ .

Մեծամեծ քաղաքներն ունին սովորաբար իրենց ծառուղիները, դրախտները և լնդարձակ պարտէզները :

Դրախտ կ'ըսուին ընդարձակ ծառատունկերն՝ անտառներու նման. պարտէզները դը-




րախտներու չափ ընդարձակ չեն, և կը ծառայեն զուարձութեան և կամ ուսումնական զբաղանաց : Ասոնցմէ զատ կան, նոյն իսկ քաղաքաց կեդրոնները, ցանկապատ պարտեզներ, որ կը ծառայեն ժողովրդեան հան-



Հանդերձ համարակալութեան համարակալութեան

գըստութեանը և ժամանակնին զուարձութեամբ անցնելու : Դրախտաներն, պարտէզներն, ծառուղին և հասարակաց հրապարակներն, ոչ միայն կը գեղեցկացունեն քաղաքը, այլ միանգամայն կը նպաստեն առողջարար օգ մ'ունենալու :


Այսու հանդերձ կան քաղաքներ, որ չունին բնաւ ոչ ծառուղիք և ոչ խակ հասարակաց հրապարակներ :



Անգլիա

Հրապարակաց մէջտեղը կը կանդնեն սովորաբար պատմական կորող մը, և կամ երեւելի անձի մը արձանի, ի յիշատակ անոր,

և 'ի նշան երախտագիտութեան՝ ժողովրդեան կամ ազգին կողմանէ. ի խրախոյս և ի յորդոր քաղաքացեաց՝ որպէս զի ուրիշներն ալ ջանան անոր նմանիլ:



Հրապարակներու մէջ կը շինեն սովորաբար աղքիշրներ և մանաւանդ ցայտող չրեր կամ շատրուցաններ:

Հարցմունք. — Մեծամեծ քաղաքներու մէջ ի՞նչ տեսակ տեղեր կան ժողովրդեան զբօսանաց համար. — Քաղքին ալ օգուտ մ'ունի՞ն այս զբօսանաց տեղերը. — Քաղաքաց հրապարակներուն մէջտեղը ի՞նչ յիշատակներ կը կանգնեն մարդիկ. — Ի՞նչ նպատակաւ կը կանգնեն այս արձանները և կոթողները. — Ուրիշ ի՞նչ տեսակ բաներ կը շինեն հրապարակներու մէջ:

33. — Գերեզմանատուն.

Երբ քաղքէն դուրս ելլենք և քիչ մասն երթանք, կը հանգիպինք որմնապատը դարձակ գաշտի մը՝ որ քաղքին գերեզմանառունն է:

Գերեզմանատունք նշան են կրօնական յարդանաց որ հնուց ՚ի վեր ցցցուցած են միշտ մարդիկ մեռեալներու նկատմամբ:

Քրիստոնէութիւնը սկսած ժամանակ մարդիկ քաղաքներու և գիւղերու մէջ փոխադրեցին գերեզմանատունները՝ հաստատելով զանոնք եկեղեցեաց չորս կողմը. ինչպէս հիմակ ևս գուցէ գտնուին գեռ քանի մի գիւղերու մէջ. սակայն այս բանս վնասակար ըլլարով մարդկանց առողջութեանը, տէրութեանց օրէնքներով վճռուեցաւ որ գերեզմանատունները քաղաքներէ և բնակութիւններէ հեռու տեղեր շինուին:

Մեծամեծ քաղաքներու գերեզմանատուները, կրնանք ըսել թէ, առանձին քաղաքներնն, ընդարձակ ձամբաներով և մէջը նշա-

նաւոր կորողներով, մահարձաններով և շենքերով։

Աշխարհիս բոլոր ժողովուրդներ, նոյն իսկ վայրենիք, ունեցած են և ունին մեռելոց համար առանձին պաշտօն և յարգանք մը։ Եկեղե-




Մահարձան։

ցին մեռելոց յիշատակին համար տարւոյն մէջ առանձին օրեր սահմանած է. այս ամենը կը յիշեցնէ մեզի հոգւոյ անմահութիւնն։

Գերեզմանաքարերու վրայ քանդակուած են տապանագրութիւններ, անմոռանալի ընե-

լու համար մեռեալ անձին անունը և յիշատակը. յորդորելու համար զմարդիկ՝ հետեւ



Գերեզմանագրութիւններ։

և լու այն անձանց բարի օրինակներուն և արդիւնաւոր բլալու մարդկութեան։

Հարցմունք. — Ի՞նչ է գերեզմանատունը. — Քաղաքներու մէջ կընան գերեզմա-

նատուներ շինել. — կամ արդեօք մեծ գերեզմանատուներ. — ի՞նչ կը նշանակէ մեռելոց յարդանք մատուցանեն. — գերեզմանաքարերու վրայ ի՞նչ կը քանդակեն և ի՞նչ նպատակաւ :

34. — Թուշնոց բոյները.

Թուշունք իրենց բոյները գարնան եղանակի մէջ կը շինեն : Հայրերնին կ'երթայ նիւթեր փնտուելու, մայրերնին կը շարէ զանոնք իւր թաթիներով և կտուցովը, և կը սկսի գլորավկել մէջը որպէս զի տեղաւորուին, և բոյնը կլորածե ըլլայ և դատարկ :

Բոյնը շինելու համար շատ ժամանակ կ'անցընէ և շատ մեծ խնամք կ'ունենայ կենդանին, վասն զի իւր տունն է, սատացուածքը և հարստութիւնն, անոր համար երբ տղաք դպչին կամ աւրեն՝ կը ճուան թուշուները, կը հեծեն և կու լան :

Երբ լմնայ բոյնին շինութիւնը, մայրը հաւկիթ կ'ածէ անոր մէջ, կը թիսէ, այս ինքն կը տաքցունէ հաւկիթները որպէս զի կարենան ձևանալ անոնց մէջի ձագուկները : Մօրը թխած միջոց հայրը կ'երթայ ճճիներ կ'որսայ, հատեր և ուտելվաք կը բերէ և կու տայ իւր ընկերոջն. և որպէս զի անոր ձանձրոյթը փարատէ՝ իւր ամենէն անոյշ երգերը կ'երգէ :

Տասուերկուք կամ տասնըվեց օրէն կ'ելեն ձագերը, բայց սկզբան շատ տկար կ'ըլլան և նօսր մազմզուկներով՝ ծածկուած : Մայ-



Եկրանիկ :



Դեղձանիկ :



Դեղձանիկ :



Կատարաւոր Արտոյտ :



Հասարակ Խայտիտ :



Սոխակ :



Սոխակ:



Սարհակ:



Դրախտահառ:




Գրախտասպան:



Կարմրաւալանչ:

բերնին զանոնք իւր թևոցը տակ կը ծածկէ, և ամեն վայրկեան հօրը բերած կերակրէն փռքը իկ մաս մը կու տայ անսնց :

Հազիւ թէ ձագերն կը սկսին ծածկուիլ փետուրներով, մայրերնին ալ կ'երթայ և կը վնասոէ անոնց ձայներ և միջատներ. ասոնք անօթեցած և միշտ ճուալով չեն թողուր վայրկեան մը հանդիսա իրենց ծնողաց. բայց միւս կողմանէ օր օրուան վրայ կը մեծնան և կը գիրնան, կը սարուին մաքրել իրենց փետուր-



Բոյն թռչնոց:

ները, կը կոթնին բոյնին եղերքը, կ'ելեն սոքի վրայ և կը շարժեն թևերնին :

Մէջերնէն ամենէն ուժովը նախ կը ցատկէ ճիւզի մը վրայ, և մայրը քաջալերելու համար զինքը՝ խոչոք պատառ մը կը գնէ բերանը. այն ատեն միւսները առաջնոյն կը հետևին: Երկրորդ օրը ամենքն 'ի միասին՝ իրենց մօրն առաջնորդութեամբ կը սկսին թռչելու վարժութիւններ ընել: Քիչ ժամա-

նակ կը տեէ այս ալ. մէկէն կը սկսին ցրուիլ դաշտերու մէջ, կ'երգեն իրենց անոյշ ձայներովն, և թշնամի ըլլալով մշակութեան վսասակար եղող ճճիներուն, կը փնտուեն զանոնք, կը գտնեն, կ'ուտեն և կամ կը սպաննեն :

Թռչող շատերուն միսը ախորժեի կերակուր կ'ըլլայ, և շատերն ալ, ինչպէս ըսինք, օգտակար են արտերու, պարտէզներու, միով բանիւ՝ մշակութեան վսասակար ճճիները ջնջենուն համար :

Հարցմունք. — Թռչուններն ո՞ր եղանակի մէջ կը շինեն իրենց բոյնը և ի՞նչպէս կը շինեն. — Թռչող բոյն շինելը շուտով կը լմնայ. — Թռչուն մը իր բոյնը շինելէն վերջ ի՞նչ կ'ընէ. — Քանի՞ օրէն կ'ելլեն ձագուկները. — Նոր ելած ձագուկներն ի՞նչպէս են և ի՞նչ կ'ուտեն. — Ե՞րբ կը սկսի մայրերնին կերակուր բերել իւր ձագուկներուն. — Ձագուկներն Ե՞րբ թռչիլ կը սկսին. — Ի՞նչ օգուտ ունին մշակութեան :

35. — Վաճառականութիւն.

Առուտուրով զբաղող մարդիկ կ'ըսուին վաճառականք. իսկ իրենց ըրած առուտուրն ուսկից շահ կը քաղեն՝ կ'ըսուի վաճառականական գործողորդիւն. ինչպէս ապրանքներ գնել նորազ զնով և վաճառել զանոնք աւելի զնով կամ քիչ շատ շահով :

Բուռն վաճառականները (commerçants,

négociants) կը գնեն ապրանքը և մեծ քանակութեամբ կը վաճառեն. ինչպէս ցորեն, ալիւր, պտուղ, գինի, իւղ, բրինձ, մսրացորեն, շաքար, սուրճ, մուշտակ, չուխայ, մետաքս, կաշի, կահ կարասիներ, և այլն. Ասոնց գնածները՝ կամ ուտելու բաներ են և կամ մարդկանց կարևորքնեն:

Երկրորդ կարգի վաճառականք (marchands) կ'ըսուին անոնք՝ որք կը գնեն մեծաքանակ (en gros) ապրանքներ, և կը վաճառեն փոքրաքանակ. իսկ մանրավաճառք (détailants), իրենց ապրանքները կը գնեն ուղղակի երկրորդ կարգի վաճառականներէ, և կը վաճառեն գեռ աւելի քիչ քանակութեամբ:

Կան նաև յանձնակառարներ (commissionnaires) որք ուրիշի հաշուցն կը գնեն և կը վաճառեն, առնելով անոր փոխարէն վարձք մը. միջնորդներ (courtiers) որք յարաբերութեան մէջ կը գնեն գնողները և վաճառողները, և իրենց վարձք կամ միջնորդչէք կ'առնուն հարիւրին այսափ ինչ, աւելի կամ նուազ՝ ըստ տեսակի ապրանքին:

Կան վաճառականութեան վերաբերող շատ մոռիշ գործեր, որոց վրայ կը հսկեն այլ և այլ անձններ, և այդ գործերէն իրենց վաստակ կը հսկեն:

Վաճառականութիւնը տէրութեանց և ժողովրդոց կեանքն է, տէրութիւնները և քաղաքները շարժման մէջ կը պահէ և պատճառ կ'ըլլայ ժողովրդեան յառաջադիմութեան և զանոնք հարստացնելու. Դժբաղդ է տէրութիւն մը եթէ իւր մէջ վաճառականութիւն չի կայ:

Հարցմունք. — Ի՞նչ տեսակ մարդիկ կ'ը-
սուին վաճառականք. — Որո՞նք են վաճառա-
կանական գործողութիւննք. — Բո՞ն վաճա-
ռական ըստածները որո՞նք են և ի՞նչ տեսակ
նիւթեր կը գնեն. — Որո՞նք են երկրորդ
կարգի վաճառականք և մանրավաճառք. —
Ի՞նչ գործ կ'ընեն յանձնակատարք և միջ-
նորդք. — Ի՞նչ է միջնորդչէք. — Կան գեռ
ուրիշ վաճառականութեան վերաբերեալ գոր-
ծեր. — Վաճառականութիւնը օգտակա՞ր է
տէրութեան և ժողովրդոց :

36. — Տոմար.

Տոմարը ցուցակ մ'է, որ կը ցուցնէ օրերու
յաջորդութիւնը տարուան ընթացքին մէջ,
աւելցնելով վրան աստղաբաշխական ծանօ-
թութիւններ, կրօնական տօներ և քաղաքա-
կան սովորութիւններ : Տոմարին իւրաքանչիւր
օրերը կը բաղկանան քսան և չորս ժամերէ.
ասիկայ կ'ըսուի քաղաքական օր՝ զանազա-
նելու համար աստղական և արևային օրե-
րէն : Աստղական օր կ'ըսուի այն ժամանակը՝
զոր կ'անցունէ աստղ մը միջօրէականէն մեկ-
նելէն մինչև նոյն միջօրէականին վրայ երե-
նալը. իսկ արևային օր կ'ըսուի՝ տեղոյ մը
մէջ ցերեկէ մինչև միւս ցերեկ անցած ժա-
մանակամիջոցն, որ կը կազմէ ստոյգ ժամա-
նակը :

Քաղաքական օրը կը սկսի կէս գիշերէն.
այսպէս եթէ տղայ մը ծնանելու ըլլայ գեկ-
տեմբեր 31ին 1896 տարւոյ, գիշերուան ժա-

մը տասնըմէկ ու կէսին, այդ տղան 1896ին
ծնած կը համարուի. իսկ եթէ ծնանի տա-
սուերկուքը տասն անցած, այն տաեն 1897ին
ծնած կ'ըլլայ : Այս տարբերութիւնը ոչինչ
կը կարծուի, սակայն ըստ պարագայից նշա-
նակութիւն կ'ունենայ. օրինակի համար, զի-
նուորութեան քուէ քաշելու միջոց :

Եօթն օր կը կազմէ շարաթ մը. եօթնե-
րորդ օրը հանգստեան օր է, որ կ'ըսուի կիւ-
րակէ : Հանգիստ և զբանակ մարդկանց և
տղայոց կարեսը են. ինչպէս որ պէտք կը
զգայ մարդու օրուան մէջ քիչ մ'ատեն շոնչ
առնուլ աշխատութենէ, որպէս զի կարենայ
ուտել, հանգիստ առնուլ, օդ փոխել, և վեր-
ջապէս գիշեր ժամանակ թողուլ աշխատու-
թիւնը և քնանալ, որպէս զի ոյժ առնուլ եր-
կրորդ օրուան աշխատութեան համար. այս-
պէս ալ պէտք է որ քանի մ'օր անցնելէ վերջ՝
օր մ'ամերող ազատ և հանգիստ ունենայ.
վասն զի այն ատեն երկրորդ օրը աւելի ե-
ռանդեամբ և աւելի արգիւնաւոր կերպով կը
ձեռնարկէ իւր գործոյն :

Ամիսներէն սմանք երեսուն օր են, այլք
երեսուն և մէկ. վեւորոշար ամիսը միայն՝
քսան և ութ օր ունի, և երբ նահանջ տարի
ըլլայ՝ քսան և ինն օրերէ կը բաղկանայ, որ
չորս տարւոյ մէջ մի անգամ կը հանգիստի:

Քաղաքական օրը քսան և չորս ժամէ կը
բաղկանայ, բայց ստոյգ օրը անկից պակաս
է երեք վայրկեան և յիսուն և վեց մանրեր-
կրորդ : Այս վայրկեանները և մանրերկրորդ-
ները յաջորդաբար քովէ քով գալով՝ չորս
տարուան մէջ կը կազմեն ամբողջ օր մը, զոր

կը յաւելուն փետրուար ամսոյ վրայ. այս է ահա նահանջ տարին:

Բոլոր Եւրոպիոյ ժողովուրդները, բաց ՚ի Ռուսէ և Յոյնէ, ամենքն ալ կը գործածեն առ Հասարակ Գրիգորեան տումարը, որ Գրիգոր ԺԳ Քահանայապետին անունը ստացած է, ինքն ըլլալով նորոգողը Յուղեան տումարին՝ որ Յուկիս կեսար Հնարած էր: Գրիգոր ԺԳի ըրած այս սրբագրութենէն՝ ծագեցաւ երկու թուականներու տարբերութիւններն՝ նին և նոր տոմարի մէջ. անոնք որ անփոփոխ պահեցին Յուղեան տումարը, տասուերկու օր ետ մնացին Գրիգորեան տումարն ընդունեղներէն: Այս երկու տամարներն ՚ի սկզբան տասն օր տարբերութիւն ունէին իրարմէ. 1700ին՝ նահանջ օրուան մը տևենալովը՝ եղաւ տասնըմէկ, 1800ին՝ յաւելմամբ ուրիշ օրուան մալ՝ եղաւ տասուերկու. իսկ 1900ին՝ պիտի ըլլայ տասուերկու:

Տարեգլխուն չնորհաւորութիւններ ընելու սովորութիւնը՝ շատ հին է. Հոռվմայեցւոց մէջ Քրիստոսի թուականէն 700 տարի առաջ կար, և գեռ անկից ալ հին է:

Տոմարին վրայ աւելցուցին հետզետէ կրօնական և բարոյական նիւթեր, առողջաբանական, մշակութեան վերաբերեալ, պատմական, և այլն. Հետեւաբար ըստեցաւ օրացոյց. այս ալ նորանոր յաւելուածներով ճոխացաւ, և ըստեցաւ տարեգրութիւն:

Հարցմունք. — Ի՞նչ է տոմարը. — Որո՞նք են քաղաքական, աստղական և արևային օ-


րերն. — Ե՞րբ կը սկսի քաղաքական օրը. — Եօթն օր ի՞նչ կը կազմէ և եօթներորդ օրն ի՞նչ է. — Ամիս մը քանի՞ օր ունի. — Ի՞նչ է նահանջ տարին և ի՞նչպէս կը ձևանայ. — Ի՞նչ են Գրիգորեան և Յուղեան տոմարներն. — Ի՞նչ տարբերութիւն կայ հին և նոր տոմարի մէջ. — Տարեգլխուն չնորհաւորութեանց սովորութիւնը Երբ սկսած է. — Ի՞նչ են օրացոյց և տարեգրութիւն:

37. — Շոգենաւ.

Հին ատեն մարգիկ ջրերու վրայ նաւերով ձանապարհորդելու համար կը գործածէին կամ թիակներ և կամ հովով առաջաստներ: Թիակներով կրնային ամեն ուզութեամբ ճանապարհորդել, և գէմ դնել հովերու, ծոծովային ալեկոծութեանց և հոսանքներու. սակայն մեծ նաւերու մէջ թիավարք այնչափ բազմաթիւ կ'ըլլային որ նաւը կը բեռնաւորուէր, և գժուարին կ'ըլլար միանգամայն վաճառքներ փոխադրեն:


Երբ սկսան մարգիկ առ Հասարակ ամեն ծովերու վրայ նաւարկել, նաւերու ձևերն ալ սկսան փոփոխութիւններ կրել, և քիչ ժամանակի մէջ նաւեր շինելու արուեստն այնքան յառաջադիմեց, որ ձգեցին թիակները և սկսան հովը ծառայեցնել և առաջաստներով ճամբորդութիւններ ընել: Սակայն յաջող ճամբորդութիւն մ'ունենալու համար պէտք էր որ հովը սասաթիկ ըլլար, ապա թէ ոչ կամ բոլորովին կը կենար նաւը և կամ շատ դանդաղութեամբ առաջ կ'երթար:

Այս ճամբորդութեան երկարութիւնը համառոտելու և հովերէ կախում չունենալու



Առագաստաւոր նաւ :

նպատակաւ՝ հնարեցին շոգենաշերլ, որք ներկայ ժամանակս կը վիստան ծովերու և գետերու



Շոգենաւ :

վրայ, և կը վազեն արագութեամբ, կը ճեղքեն ալիքները, կը փոխագրեն ապրանքները, ճա-

նապարհորդներ կը տանին կը բերեն, օգնութեան կը հասնին առագաստաւոր նաւերու՝ որ հով շըլլալուն պատճառաւ կը մնան ծովոն մէջտեղը, և ուրիշ անթիւ օգտակար ծառայութիւններ կը մատուցանեն մարդուս:

Շոգենաւերու մէջ գոլորշին է որ իբրև շարժիչ զօրութիւն կը գործածուի, և այս գաղափարը նախ Հերոն Աղեքսանդրացին ունեցաւ, մեր թուականէն 120 տարի առաջ. առաջին բուն շոգեշարժ մեքենան հնարովն եղաւ 1769ին Ռւաթ անգղիացին, և 1812ին առաջին անգամ Մնդղիոյ մէջ սկսաւ անոր գործածութիւնը:


Շոգեշարժ մեքենան որպէս զի կարենայ մզել շոգենաւը, հաղորդուած է ասոր պտուտակին հետ, և զայն արագութեամբ կը դարձունէ: Պտուտակն՝ որ երկաթէ կամ պղընձէ ահագին զանգուած մ'է, և կը նմանի սովորական պտուտակներու, դարձած ժամանակը կը փորէ ջուրը և առաջ կը մղէ զշոգենաւն:

Հարցմունք. — Հին ատեն մարդիկ ծովով վրայ ի՞նչ կերպով կը ճանապարհորդէին. — Ի՞նչ անպատեհութիւններ ունէին առագաստաւոր նաւերն. — Առագաստաւոր նաւերու տեղ ի՞նչ հնարեցին. — Ո՞վ ոնեցաւ առաջին գաղափարը շոգեշարժ մեքենայի. — Շոգեշարժ մեքենային բուն հնարովն ո՞լ եղաւ. — Առաջին անգամ ո՞ւր սկսաւ անոր գործածութիւնը. — Ի՞նչ է պտուտակն և ի՞նչ բանի կը ծառայէ:

38. — Կողմնացոյց.

Կողմնացոյցը նաւարկութեան անհրաժեշտ համարուած գործի մ'է, որ կը ցուցնէ միշտ հիւսիսային բևեռին ուղղութիւնը. կը բարկանայ պղընձէ տուփէ մը՝ վրան ապակուով ծածկուած, մէջտեղը ունի մագնիսացեալ ասեղ մը՝ որ շատ անդամ կապած կ'ըլլայ վրան գտնուող հողմանիշներու ցուցակին հետ:

Կողմնացուցի գիւտը ունակ կ'ընծայեն զիւ-



Կողմնացոյց:


Նացւոց, այլք կ'ըսեն թէ Փլաբիս Ճ'եյեա անուամբ խուացին գտած ըլլայ 1302ին, բայց և այս հաւանական չէ:

Նաւարկութիւնը ամենամեծ յառաջադիմութիւնն մ'ըրաւ կողմնացուցի գիւտովն. նաւասակիք բոլորովին անվախ կ'արշաւեն Ովկիանու ծանօթ և անծանօթ կողմերը, և Քրիստովոր Քոլոմակուայս գործուոյն առաջնորդութեամբը գտաւ Ամերիկան:

Հարցմունք. — Ի՞նչ է կողմնացոյցն և ինչ է կը բազկանայ. — Ովկ կը կարծուի թէ գտած ըլլայ զայն. — Կողմնացոյցն օդուտ մ'ունի՞ նաւարկութեան:

39. — Կալուանաձուլումն.

Կալուանաձուլումը (galvanoplastie) գարուս նշանաւոր գիւտերէն մին է. առարկայի մը վրայ ելեկտրական հոսանքով կը հանգեցու-



Կալուանաձուլման արկղ:

Նեն լուծման մը մէջ գտնուող մետաղը, այնպէս որ առարկային երեսը կը ձեանայ խառմը՝ յար և նման իւր կազապարին:

Այսպէս, օրինակի համար, եթէ ունենանք մետաղական աղի մը լուծումը, և ասոր մէջէն անցունենք ելեկտրական հոսանք մը, յետինս՝ որ տարրալուծելու յատկութիւնն ունի՝ մետաղական աղին լուծումը կը վերածէ իւր տարրերքներուն. մետաղը կը բաժնուի և կ'երթայ կը ժողվի դէպ 'ի մէկ կողմը:

Այս գեղեցիկ գիւտը, որ նշանաւոր առուեստներէն մին եղաւ այսօրս՝ գտան երկու-

բնաբանք մի և նոյն ժամանակ՝ 1837ին. առողջ մին էր Անդղիացի Սբենսեր, միւսն Ռուս՝ Եպաքողի: Հիմայ կալուանաձուլման արուեստը մեծապէս յաւաշաղիմեց. ասով կը ստանան գրամմերու, միտաներու, կնիքներու, և այլն, յար և նման մետաղեայ պատկերներն. այսպէս նաև, օրինակ իմն, դաճով կը շինեն արձաններու կաղապարները, և այդ կաղապարին վրայ կալուանաձուլմամբ հանգչեցներով մետաղ մը՝ կ'ունենան մետաղեայ արձան մը ճիշտ նման առաջնոյն:

Դարձեալ, կալուանաձուլմամբ է որ կ'ուկեզօծեն և կ'արձաթազօծեն շատ մ'առարկաներ :

Հարցմունք. — Ի՞նչ է կալուանաձալումն. — Ի՞նչ ազդեցութիւն կ'ունենայ ելեկտրական հոսանքն՝ եթէ անցնի մետաղական լուծման մը մէջէն. — Որո՞նք գտան կալուանաձուլման արուեստը. — Ո՞ր տեսակ առարկաներու պատկերները կ'ունենանք կալուանաձուլմամբ:


40. — Լուսանկար.

Դարուս նշանաւոր գիւտերէն մին եղաւ նոյնպէս լուսանկարն. այն է, իրի մը կամ առարկայի մը պատկերը առնուլ ապակւոյ կամ թղթի վրայ:

Լուսանկարը գտան 1829ին Նիէրս, Տակեռ և Թալպո:

Լուսանկարի գիւտը հիմնուած է այս սկզբ-

բան վրայ. եթէ ունենանք մուխ սենեակ մը և պատուհանին վրայ փոքրիկ բացուածք մը թողունք ուսկից կարենայ լոյս մոնել ներս, այս բացուածքին դիմաց երբ առարկայ մը գտնուի, նոյն առարկային պատկերը մուխ սենեկին մէջ պիտի անդրագառնայ. այնպէս որ եթէ գտնուի հոն նկարիչ մը, և առնու այդ գրունքն անդրագարձող առարկային շուքը




Մուխ սենեկով առարկային շուքը թղթի վրայ ծրագրչով
նկարելու:

թղթի մը վրայ, ծրագրչով պիտի կարենայ ճիշդ նկարել զայն:

Համարենք ուրեմն, որ այդ մուխ սենեկին մէջ գրած ըլլանք լուսանկարչութեան համար պատրաստուած ապակիներէն մին, այն ատեն գրսի առարկային շուքը զարնելով ապակւոյն

վրայ՝ այդ պատկերն ինքնիրեն պիտի նկարուի հոն. այս է ահա լուսանկարը:

Շատ մեծ և նշանաւոր գիւտ մ'է այս. անձ մը որ աշխարհիս մէջ հռչակուած է, որոյ անունը լսած ենք շատ, կրնանք տեսնել թղթի



Մուլք սենեակ լուսանկարչութեան:

մը վրայ անոր պատկերը և գաղափար մ'ունենալ վրան. այսպէս նաև չենքեր, քաղաքներ, տեսարաններ, լուսանկարով մեր աշաց առջև կը ներկայանան:

Հարցմունք. — Ե՞րբ գտնուեցաւ լուսանկարը և որոնք գտան. — Ի՞նչ է լուսանկարը. — Առարկայի մը պատկերն ի՞նչ կերպով կը նկարուի ապակւոյ մը վրայ:

41. — Ադամանդ.

Յարդի քարերոն մէջ ամենէն ընտիրն և թանկագինը ադամանդն է, հազուագիւտ մարմին մը, կարծր և փալիլոն:

Ի՞նչ որ կ'երեկի, ադամանդը գտնուած է առաջին անգամ Հնդկաստանի մէջ, և կը գլունուի հիմակ հատաձև կոմ բիւրեղացեալ 'ի Պրազիլ, յԱրևելեան Հնդկաստան և Ուրալ լերանց վրայ: Այս յարդի գոհարն վնասող գործաւորները՝ մերկացած կ'աշխատին և հսկողութեան ենթարկուած են, որպէս զի չե գողնան:

Ադամանդը սովորաբար անգոյն է, բայց կ'ըլլայ նաև կապյոտ, գեղին, վարդագոյն և սեւտ. գործաւորք՝ փնտուած ժամանակնին երբ գտնան ադամանդ մը, կը սկսին ծափ զարնել. իրենց վրայ հսկողներէն մին կը վազէ, կ'առնու զայն և կը գնէ պնակի մը մէջ. սակայն այս հսկողութիւններով հանդերձ՝ ամենէն մեծ և գեղեցիկ ադամանդները կը գողցուին:

Ոզորկ երեսները՝ կ'աւելցունեն ադամանդին վայլը. բայց որովհետեւ կարծր մարմին մ'է, ինչպէս որ ըստնք, այն պատճառաւ զինքը մաշեցնելու համար իւր փոշին կը գործածեն: Երկու տեսակ կը բանին ադամանդը, 'ի վարդենիկ (en rose) և 'ի շողլողուն (en brillant). վարդենիկը բրդածն է և եռանկիւն երեսներով. իսկ շողլողուն ադամանդին գագաթը տափարակ է՝ և ունի եռանկիւն և տարանկիւն երեսներ: Ադամանդը կը կըռեն

կերաստով (carat). իւրաքանչչիւր կերասա վեր՝ ի վերց կ'ամէ 250 ֆրանք։ Աշխարհիս վը-
րայ գտնուող գլխաւոր յարդի ադամանկներն
են Հետևեալները.

Պոռակոյ բագաշտրին որ կը կըսէ 300
կերատ:

Առկող կայսեր ոլ կ'ամէ 44,725,000
ֆրանք և կը կը 279 կերպա :

Առաջաց կայսերը կը կշոէ 195 կերատ:
Գաղղիոյ բազարինը » 136 »

Ոտուաց կայսերը ժամանակաւ Պարսից թագաւորին էր, և կատարինէ Բ կայսրուհին 1772ին գնեց զայն Շափրադ անուամբ հայէ մը 2,500,000 ֆրանքի, տալով 400,000 ֆր. ալ իբր ծախսք ճանապարհորդութեանը :

Հարցմունք. — Ի՞նչ տեսակ մարմին է ա-
գամանդն և ո՞ւր կը գտնուի. — Ի՞նչ կեր-
պով փոխառել կու տան զայն աշխատառաց. —
Քանի կերպով կը բանին ադամանդը և ին-
չով կը կշռեն. — Որո՞նք են աշխարհիս վրայ
գտնուող գլխաւոր յարդի ադամանդներն. —
Ուստաց կայսեր ադամանդն ո՞ւ միից գնուած է:

42. — ՀԱՅՈՒԹԻՒՆ.

լանուկին (platine) դատաւ Մնառոն Ռուլլա
1735ին. առաջ կ'ըսուէր սպիտակ ոսկի, և
երբ սկսան զարգաբանաց առաքեաներ շինել
ասով՝ ըսին լանուկի։ Ծանր և փայլուն մե-
տաղ մ'է, և արուեստից մէջ շատ կը դորձ-

ածուի. արծաթէն սուզէ, բայց սսկիէն աժմն:

Հարցմունք. — Ո՞վ դատւ լինուկին և ի՞նչ
տեսակ մետաղ է:

43. — Աւել.

Երբ սոկը կտոր մը ձգենք կրակի մէջ,
կ'այրի և կ'ըլլայ ճերմակ և վշրուն կտո-
րուանք, որք սոկեր քարային հիշքերն են.
իսկ այրած և լմացած նիւթերը կ'ըսուխն նոյն
սոկեր գործարանաշոր հիշքերը :

Ղնդ հակառակին, գնենք ոսկը զօրաւոր
քայլախի մէջ. այն ատեն քարային նիւթերը
կը լուծուին և կը մնայ կակուզ և առաձգա-
կան մարմին մը. այս է զործարանաշոր Աիշրեն,
և ասով կը շինեն սոսիննա:

Ոսկըի կարծրութիւնն և պեղորթիւնն քա-
րային նիշրեն է, առանց վերջնոյս կ'ըլլայ կա-
կուղ և դիրքակոր: Փաքրիկ տղոց ոսկըները
կը բազկանան գործարանաւոր նիւթէ միայն.
Քարային նիւթը կամաց կը սկսի մտնել ա-
նոնց մէջ և զանոնք կը կարծրացնէ: Տղայոց
ոսկըներուն այս կարծրացումը կանոնաւոր
կերպով կ'ըլլայ՝ երբ տղան կաթով մնանի,
վասն զի գեւրաւ կը մարսէ. ընդ հակառակն
դանդաղ և անկանոն է երբ տղան ժամանա-
կէն առաջ փոխանակ կաթ ուտելու՝ կը սկսի
ուտել ապուր, միս և ընդեղէններ: Հետեա-
բար տղուն ոսկըները կը մնան կակուղ և ա-

բաձգական, կոնակը կը ծռի, կ'ըլլայ ողնաւ-
թեք (rachitique) և դժուարաւ ալ կ'ապրի:

Կընայ ըլլալ որ մարդուս ոսկըներէն մին
գիպուածով կոտրի. այն ատեն կը ջանան ա-
նոր երկու ծայրերը իրաբու հետ միացնել,
և գրսէն խնամքով մը պատել. քիչ ատենէն
մածուցիկ նիւթով մը ասոնկը կը կպչին իրա-
բու հետ :

Հարցմունք. — Ոսկեր մը քարային և գործարանաւոր նիւթերն որո՞նք են. — Կաթնօդտակա՞ր է տղայոց սոկրներուն աճմանը. — Ի՞նչպէս կը միացունեն սոկր մը երբ կոտրի:

44. — Եթերացումն.

Եթերացումը գործողութիւն մ'է որ կը
կատարուի եթերով կամ քլորակերպով. այս
նիւթերէն մին չնչել կու տան հիւանդի մը՝
վիրաբուժական գործողութիւն դեռ չի կա-
տարած, որպէս զի անզգայանայ և ցաւերը
չի դդայ: Այս դիւան ըրաւ Ժաքսոն 1846ին:

Եթերացմանը կընան անզգայացնել մարդ-
մամբողապէս՝ և կամ իւր անդամոց մի
մասն, օրինակի համար, թմրեցնելով ձեռաց
մի մասն, սրունքն, ոտքն, ծնօտի մի կողմն,
և այն :

Որովհետեւ եթերը հիւանդին ջղերը կը գրգռէ, անոր տեղ փոխանակուեցաւ քլորակերպը, որ շատ աւելի ազդեցութիւն ունի խորին կերպով անդայացներու հիւանդը, և

ամենէն՝ ստուիկ և կոկծելի վիրաբուժական
գործողութիւնքն՝ իբր մեռելի մը վրայ կա-
տարել տայու:

Սակայն երկու նիւթոց գործածութիւնքն
ալ կը պահանջեն միշտ ամենամեծ զգուշու-
թիւններ, և փարբեկ անհոգութիւն կամ ան-
ուշադրութիւն մը կրնայ հիւանդին կեանքը
վտանգել, ինչպէս որ ապացոյցներն անպա-
կաս են:

Հարցմունք. — ի՞նչ է եթերացումը և ովզ
գտաւ. — ի՞նչ նիւթերով կ'եթերացնեն ըդ-
մարդ և ի՞նչ օգուտ ունի. — Եթերացներու
ծառայող նիւթոց գործածութեան համար
զգուշովթիւն կը պահանջուի :



ՑԱՆԿ

ԵԶ

Դարբոցականի	մը	կարեսրներն	5
Մարգուս	բնակութեան	մկրնառութիւնը	11
Հովուութիւն.			14
Սենեկի	մը	կահասիներն	15
Համազգեստներու	ձեն		17
Արդուղարդի	սեղան		19
Աւանդունք			22
Միս	և	որսորդութիւն	25
Չուկ			27
Կաթ.	-	Կարագ. - Պանիր	51
Կոլուհատ.	-	Յուլ.	55
Ա.Դ			57
Շաքար			40
Համեմեր			45
Վնասակար	բայսեր		48
Գետանախնձոր			49
Պարտէզ			52
Պառուկ	և	հատումն ծառոց	54
Տերեք	և	անոնց գործածութիւնն	56
Դաղիկներ	և	պառուներ և անոնց գործածութիւնքն	59
Ծիալստ	և	Աւքոնի	65
Օդ			64
Չուր			71
Կրակ			77
Մթնոլորտային	երեսյթներ		81
Մարմնամարդ			89
Թուղթ			90
Գիրք			95
Նկար			98
Գրասուն	և	թանգարան	100
Բարեգործական	հաստատութիւններ		102
Դասուղիք	և	Հասարակաց հրավարակներ	104

Գերեզմանատուն	109
Թռչնոց բոյները	112
Վաճառականութիւն	116
Տոմար	118
Շոգենաւ	121
Կողմացոյց	124
Կալուանաձուլումն	125
Լուսանկար	126
Աղամանէ	129
Լանուկի	150
Ուկր	151
Եթերացումն	152



7:

2m,

2

34

2013

«Ազգային գրադարան»



NL0064329

